COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ

CDEG (2008) 15

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄԻՏԵ



ORGANISATION INTERNATIONALE DE la francophonie

Կազմված է Շեյլա Քվինի կողմից

Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների և իրավաբանական հարցերի տնօրինություն

www.coe.int/equality

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. Ներածություն 2
1.1 Ձեռնարկի նպատակը 2
1.2 Նպատակային լսարան 5
1.3 Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը 8
1.4 Գենդերային բյուջետավորումը հավակնոտ ծրագիր է 10
1.5 Ձեռնարկի բովանդակությունը 13

Բաժին 2. Ինչպես իրականացնել գենդերային բյուջետավորումը 17
2.1 Գենդերային բյուջետավորման նախապայմանները 19
2.1.1 Գենդերային խնդիրների ընկալումը 20
2.1.2 Քաղաքական պարտավորությունը 22
2.1.3 Բյուրոկրատական մոտեցման հաղթահարումը 23
2.1.4 Կառավարության գենդերային քաղաքականության գործառնական արտահայտումը 24
2.1.5 Գենդերային գործընթացն ամենօրյա աշխատանքում՝ գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը որպես կազմակերպչական փոփոխություն 26
2.1.6 Տվյալների գծով պահանջների սահմանում և համակարգերի ստեղծում 29
2.2 Գենդերային բյուջետավորման երեք փուլերը 31
2.3 Գենդերային բյուջետավորման գործիքները 45
2.3.1 Պետական ծախսերի գենդերային վերլուծություն 45
2.3.2 Հիմնական մոտեցում 50
2.3.3 Վերլուծության ընդլայնումը 53

2.3.4 Գենդերային փորձագիտության ձևավորումը 59
2.3.5 Գենդերի որպես վերլուծական կատեգորիայի ներառումը 60

Բաժին 3. Գենդերային բյուջետավորումը տարբեր մակարդակներով 74
3.1 Կենտրոնական կառավարություն 74
3.1.1 Գենդերային բյուջետավորման օրենսդրական հիմքերի ապահովումը 76
3.1.2 Գենդերային բյուջետավորումը բյուջետային բարեփոխման հետ փոխկապակցումը 84
3.1.3 Ծախսային վարժություններ 88
3.1.4 Կանանց բյուջետային հաշվետվություն 89
3.2 Գենդերային բյուջետավորումը ոլորտային/նախարարությունների մակարդակով 91
3.3 Գենդերային բյուջետավորումը շրջանային և տարածքային մակարդակով 97
3.4 Գենդերային բյուջետավորումը ծրագրային մակարդակով 99
3.5 Գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիր 104

Բաժին 4. Քաղաքացիական հասարակության դերը 110

Բաժին 5. Հավելվածներ 134

Բաժին 6. Գրականություն 147

Բաժին 7. Երաշխագիտություն 151

ԲԱԺԻՆ 1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն աշխատանքը պրակտիկ ուղեցույց է հանդիսանում գենդերային բյուջետավորման իրականացման համար: Սա այդ ուղղությամբ իրականացվող առաջին քայլը չէ, քանի որ գոյություն ունեն զանազան հրապարակումներ, որոնք լուսաբանում են գենդերային բյուջեի տրամաբանությունը, գենդերային բյուջետավորման նախապայմանները և պատմությունը և դրանց մեկ օրինակը բերվում է սույն ձեռնարկի վերջին մասում՝ Տեղեկատվության աղբյուրներ բաժնում:

Սույն ձեռնարկում դիտարկվում է գենդեր հասկացությունը, գենդերային իրավահավասարության ռազմավարության նպատակները, գենդերային ահնհավասարության դրսևորումները, անկանխամտածված գենդերային կողմնակալության խնդրի լուծման համար կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը, գենդերային ռազմավարության իրականացման հիմքում ընկած՝

գենդերային իրավահավասարության արմատավորումը բյուջետային քաղաքականությունում: Գենդերային բյուջետավորումը, որպես գենդերային իրավահավասարության արմատավորում բյուջետային քաղաքականությունում, չի կարող իրականացվել առանց այդ հիմնարար սկզբունքների ըմբռնման: Անշուշտ գենդերային բյուջետավորման գծով որոշ փորձնական ծրագրեր մասնակիցներին թույլ տվեցին ավելի թարմ կամ խորը հայացքով անդրադառնալ գենդերային հարցերին: Այնուամենայնիվ, բյուջետային ռազմավարության ըմբռնումը պահանջում է գենդերային իրավահավասարության հարցերի լուծման գծով նախնական փորձի առկայություն: Ուստի, գենդերային բյուջետավորումն ամենևին էլ առաջին քայլ կամ գործիք չէ:

Երկրորդ բաժնի առաջին մասում անդրադառնում ենք գենդերային բյուջետավորման գործընթացում մասնակցելու համար պահանջվող փորձին ու պայմաններին: Դրանք «Ի՞նչպես իրականացնել գենդերային բյուջետավորում» բաժնի մի մասն են կազմում: Այս ձեռնարկն օգտագործելիս գայթակղություն կարող է առաջանալ շրջանցել այդ բաժինները և անմիջապես անցնել կոնկրետ գործիքների և մոտեցումների մասին բաժիններին: Կոնկրետ գործիքների, հրահանգների և հստակ սահմանված քայլերի նկատմամբ նկատվում է զգալի պահանջարկ: Այնուամենայնիվ ան-

թույլատրելի է անտեսել կամ շրջանցել հիմնարար սկզբունքները: Դա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ գենդերային բյուջետավորման աշխատանքը պետք վերլուծական վարժությունից զատ բյուջեում ստանձնի գենդերային իրավահավասարության գծով ռազմավարական կարգավիճակ: Նման հարցերի հետ անմիջապես շփվող մի շարք փորձագետների կարծիքը կայանում է նրանում, որ մինչ ընդհանուր գործիքներ մշակելն ավելի կարևոր է անդրադառնալ տեղական առանձնահատկություններին: Վերլուծողական և ռազմավարական գործիքները ի հայտ կգան, երբ կսահմանվեն նպատակները:

Ի՞նչ է գենդերային բյուջետավորումը

- Այն գենդերային իրավահավասարության քաղաքականությունը մակրոտնտեսական քաղաքականության հետ փոխկապակցելու միջոց է:
- Այն ելնում է այն նախադրյալից, որ բյուջեները գենդերային տեսակետից չեզոք չեն:
- Այն կիրառվում է ինչպես բյուջեի եկամտային, այնպես էլ ծախսային մասերի նկատմամբ:
- Այն մեկնարկում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց վրա բյուջեի ազդեցության վերլուծությունից, որի արդյունքում գենդերային սկզբունքը արմատավորվում է բյուջեի ծրագրավորման գործընթացում:

- Այն հանդիսանում է գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման միջոց:
- Այն չի նշանակում ԱՌԱՆՁԻՆ բյուջե կանանց համար:
- Այն նշանակում է դեպի մարդը միտված բյուջետավորում:
- Այն նշանակում է բյուջեի արդյունքների ավելի խորը վերլուծություն:
- Այն թույլ է տալիս բարելավել թիրախների սահմանման գործընթացը և դրան համապատասխան ապահովել պետական ծախսերի առավել արդյունավետ բաշխումը:
- Այն նախադրյալներ է ստեղծում գործընթացում շահագրգիռ կողմերի ավելի լայն ընդգրկուն համար, որի արդյունքում հարստացնում է ժողովրդավարական գործընթացները:
- Այն կարող է կիրառվել կոնկրետ բյուջետային հոդվածների կամ բյուջետային ծրագրերի նկատմամբ:
- Գերագույն նպատակն է գենդերային դյուրազգաց մոտեցումների դրսևորումը բյուջետային գործընթացի բոլոր ոլորտներում, ինչպես նաև գենդերային ռազմավարության գերակա դերի արմատավորումը:

1.2 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Այս ձեռնարկը նախատեսված է գենդերային քաղաքականության համար պատասխանատու մարմինների և անձանց համար: Եվրոպայի խորհրդի սահմանմամբ գենդերային

բյուջետավորումը գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումն է բյուջետային գործընթացներում[1]:

«Գենդերային բյուջետավորումը դա բյուջետային գործընթացում գենդերային իրավահավասարության սկզբունքի կիրառումն է: Այն նշանակում է գենդերային հիմքերով բյուջեների գնահատում, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում գենդերային հեռանկարի ներդրում և սեռերի իրավահավասարություն իրականացնելու նպատակով բյուջետային ծախսերի և եկամուտների վերակառուցում»:

Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորման գծով Եվրախորհրդի սահմանումը ներկայացնում է այդ ռազմավարության իրականացման համար պատասխանատուներին, այսինքն՝ «ռազմավարության մասին որոշումներ կայացնելու գործընթացում սովորաբար մասնակցող գործիչներին»:

[1] Հաշվի առնելով գենդերային բյուջետավորման զարգացումը, շատ ծրագրեր ներկայումս չեն տեղավորվում այդ սահմանման շրջանակում: Հաճախ գենդերային բյուջետավորումից ակնկալվող արդյունքները տարբերվում են գենդերային իրավահավասարության ռազմավարության նպատակներից: Օրինակ՝ մի շարք նոր անկախ պետություններում գենդերային բյուջետավորման քարոզարշավի կիզակետում է սոցիալական ծառայությունների և սոցիալական ապահովության գծով լրացուցիչ ծախսերի ապահովումը: «Գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիր» Ա. բաժնում դիտարկվում են մի շարք ծրագրեր, որոնք միտված են բյուջետային ոլորտում գենդերային դյուրազգաց սկզբունքի որդեգրմանը, սակայն, տարբեր պատճառներով չեն համընկնում գենդերային ինքնության ապահովման ռազմավարության հետ:

«Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը դա ռազմավարական գործընթացների (վերա)կազմակերպում, բարելավում, զարգացում և գնահատում է, որը միտված է ռազմավարության մասին որոշումներ կայացնող գործիչների կողմից սեռերի իրավահավասարության տեսլականի ամրագրմանը բոլոր ռազմավարություններում, մակարդակներում և փուլերում»:

Ուստի գենդերային բյուջետավորման իրականացումը չպետք է հանձնարարվի նոր մարդկանց, այլ պետք է յուրացվի և վերջնական նպատակին հասցվի նրանց ջանքերով, ում ամենօրյա աշխատանքը պետական քաղաքականության և հանրային ծառայությունների ձևավորումն ու իրականացումն է: Հետևաբար աշխատանքի մեծ մասը կատարվելու է ժողովրդի կողմից ընտրված պետական գործիչների, քաղծառայողների և պետական ոլորտի այլ ներկայացուցիչների կողմից: Ընդհանրապես լավ կառավարման սկզբունքները և հատկապես գենդերային իրավահավասարության ռազմավարությունը լայն ընդգրկվածություն են ենթադրում գործընթացում, որի մասնակիցներն են քաղաքացիական հասարակությունը, խորհրդարանականները, սոցիալական խնդիրներով զբաղվող կառույցները, արհմիությունները, գենդերային հարցերով զբաղվող փորձագետները և գիտնականները: Ամենակարևորն այն է, որ «գործընթացում սո-

վորաբար մասնակցող գործիչները» սերտորեն համագործակցեն կանանց հետ, ազատ տարածություն և կապուղիներ ստեղծելով կանանց ներգրավման և նրանց կարծիքի հեռաձայնման համար:

Քաղաքացիական հասարակության դերը վճռորոշ է: Գենդերային բյուջետավորման ոլորտում վերջինս հաճախ հանդիսանում է նախաձեռնողի դերում: Գենդերային բյուջետավորման հաջողության նախապայմանը որպես կանոն եղել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը՝ նախաձեռնողի, քարոզչի, ուսուցչի և հսկողի դերում:

1.3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ

Գենդերային իրավահավասարության ռազմավարության գծով վերլուծություններում մի շարք սահմանափակումներ և հիմնախնդիրներ են առանձնացվում (տես՝ Շրջանակ 1): Արդյունքում գենդերային բյուջետավորման ջատագովների կողմից որոշակի մտահոգություն է արտահայտվում գենդերային բյուջետավորման և գենդերային իրավահավասարության ռազմավարության փոխկապակցվածության վերաբերյալ: Գենդերային բյուջետա-

վորումը, որն առնչվում է բյուջեի՝ դրամի հետ, նոր կագավիճակի է հասցնում գենդերային հիմնախնդիրների դիտարկումը կառավարության կողմից իրականացվող քաղաքականության ներքո: Ինչպես նշում է Հոլվետը, գենդերային բյուջետավորումը «դուրս է մղում գենդերային բյուջետավորումը “մեղմ” սոցիալական հարցերի հարթակից և այն բարձրացնում մակրոտնտեսական մակարդակի» (Holvoet, 2006 թ.): Գենդերային իրավահավասարության ռազմավարության դեպքում սկզբնական քաղաքական խանդավառությունը, որի շնորհիվ այն մեկ տասնամյակի ընթացքում որդեգրվեց գրեթե ամենուր, այնուհետև պահպանել չհաջողվեց: Սակայն, այս դեպքում ևս որոշ հույսեր են փայփայվում, որ բյուջեում խնդրի արտացոլումը կարող է նոր լիցք հաղորդել գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորմանը: Իրականում այս ձեռնարկը գենդերային բյուջետավորումը դիրքավորում է գենդերային իրավահավասարության ռազմավարության շրջանակի ներքո, ենթադրելով այն նախադրյալից, որ գենդերային իրավահավասարության ռազմավարությունը առանց բյուջետային արմատավորման չի կարող իրականացվել:

Շրջանակ 1. *Գենդերային իրավահավասարության ռազմավարության հիմնախնդիրները*

- Ռազմավարությունը պետք է առաջնորդվի գագաթից և համընդհանուր քաղաքական օժանդակություն վայելի
- Անհրաժեշտ է հստակեցնել գենդերային ռազմավարության գաղափարը և հետապնդվող նպատակների ուղերձը
- Շատ գործիչների մոտ պակասում է գենդերային հարցերի և փոփոխության կառավարման համար անհրաժեշտ փորձն ու գիտելիքը
- Տեսականորեն դրական արձագանք ստացող քայլերը և գենդերային իրավահավասարության ռազմավարությունը փոխկապակցված են, սակայն իրականում դրանք հաճախ բախվում են միմյանց հետ
- Հաճախ ուշադրությունը գենդերային իրավահավասարության նպատակից շեղվում է միջոցների վրա
- Գենդերային իրավահավասարության ռազմավարությունը պետք է սահմանի չափագրելի և ճշգրիտ քայլերով ու ժամանակացույցով սահմանված նպատակներ
- Գենդերային արդյունքների գնահատումները պետք է կրեն պարտադիր բնույթ և անբավարար արդյունքների դեպքում մեղավորները պատասխանատվություն պետք է կրեն:

1.4 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՎԱԿՆՈՏ ԾՐԱԳԻՐ Է

Մոտ տաս տարի առաջ, երբ գենդերային բյուջետավորում գաղափարը Եվրոպական երկրներում դիտարկվեց որպես տնտեսական

ներում ունեցող ռազմավարություն, շատերը դրան մեծ զարմանքով վերաբերվեցին: Ինչպե՞ս կարելի է մեկ հարթության վրա դնել գենդերային իրավահավասարությունը և ազգային բյուջեն: Մինչ այդ այս երկու հասկացությունները բոլորովին տարբեր մակարդակներում էին գտնվում: Գենդերային իրավահավասարության խնդիրները վերաբերում էին սոցիալական քաղաքականության ոլորտին, մինչդեռ բյուջեի կազմումը հիմնականում հանդիսանում էր ավելի ազդեցիկ ֆինանսական վարչության մենաշնորհը: Ի հեճուկս ձեռնարկվող վիթխարի ջանքերին, գենդերային իրավահավասարության գծով ստանձնած պարտավորությունները չէին արժանանում առաջնահերթ ուշադրության կամ կարգավիճակի: Դա նաև պայմանավորված էր տնտեսական քաղաքականության շահերից բխող բյուջետային կառուցվածքի ձևաչափից, որի պարագայում բյուջետային գործընթացում քիչ կամ ընդհանրապես որևէ տեղ չէր գտնվում գենդերային իրավահավասարության հիմնախնդիրների արտացոլման համար:

Հետագայում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Հնարավորություն ստեղծվեց որոշ չափով շտկել իրադրությունը և, մի շարք դեպքերում, արդեն իսկ իրականացվում է գենդերային բյուջետավորման գծով զգալի ճարտարագիտական աշխատանք: Որոշ Եվրոպական երկրներում գենդերային խնդիրնե-

րին դյուրազգաց մոտեցող բյուջեի ձևավորումը օենսդրական հիմքերի վրա է դրվել: Այլ երկրներում, որտեղ կառավարությունն իր ծրագրերում հաշվի է առնում գենդերային իրավահավասարության ռազմավարությունը, բյուջետային գործընթացներում կիրառվում են համապատասխան համակարգեր, ընթացակարգեր, գործիքներ, գիտելիք և փորձ: Մի շարք այլ երկրներում, գենդերային բյուջետավորման գծով նախաձեռնությունները իրականացվում են փորձնական ծրագրերի տեսքով, միջավայրի նախնական ուսումնասիրություն կատարելու համար:

Գենդերային բյուջետավորումը հավակնոտ ծրագիր է: Այն պահանջում է մտածելակերպի և գործնական աշխատանքի զգալի վերանայում: Այն նախատեսում է բյուջեի ձևավորման գործընթացում մի շարք այլ շահագրգիռ մասնակիցների ներգրավում, իրավահավասարության հարցերին ավելի մեծ ուշադրության հատկացում, այդ ռազմավարության ուղղությամբ ստանձնած պարտավորությունների գծով անհրաժեշտ միջոցների հատկացում, խնամքի տնտեսության առկայության գիտակցում, ինչպես նաև ազգային բյուջեների ձևավորման և իրականացման սկզբունքների վերանայում:

Կարևոր է ի սկզբանե պատշաճ կերպով պատկերացնել ծրագրի հավակնոտ բնույթը:

Գենդերային բյուջետավորումը լուրջ աշխատանք է պահանջում: Գենդերային բյուջետավորման որոշ աջակիցներ նախընտրում են տարածել այն ուղերձը, որ վերջինիս արդյունքում աշխատանքային բեռի որևէ զգալի աճ չի առաջանա: Սակայն գենդերային բյուջետավորումը, ինչպես և գենդերային իրավահավասարության ռազմավարությունը, հանգեցնում է հիմնարար փոփոխությունների: Ուստի գենդերային իրավահավասարության և կանանց դերի բարձրացմանը միտված ռազմավարության և բյուջետային արդյունքի վերջնական հաջողությունը, ինչպես և ցանկացած այլ հիմնարար փոփոխություն, պայմանավորված է կազմակերպչական փոփոխության ռազմավարական ծրագրի առկայությամբ և դրա հիման վրա գենդերային բյուջետավորման իրականացմամբ:

1.5 ՁԵՌՆԱՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես իրականացնել գենդերային բյուջետավորում

«Ինչպես իրականացնել գենդերային բյուջետավորում» բաժինը հանդիսանում է այս ձեռնարկի առանցքային մասը: Այն սկսվում է գենդերային բյուջետավորման համար հիմնարար դեր ունեցող սկզբունքների ներկայաց-

մամբ, որոնք միասնականորեն նկարագրում են գենդերային բյուջետավորումը վերլուծաբանական աշխատանքից արդյունավետ ռազմավարական գործունեության ձևափոխելու համար անհրաժեշտ միջավայրը:

Այնուհետև այս բաժնում դիտարկվում են գենդերային բյուջետավորման ռազմավարական գործընթացի երեք փուլերը.

- Վերլուծական աշխատանք,
- Գենդերային իրավահավասարության ապահովմանը միտված բյուջեի կառուցվածքային փոփոխություն,
- Գենդերը բոլոր բյուջետային գործընթացերում արտացոլելու նպատակով տարվող պարբերական աշխատանք:

«Ինչպես իրականացնել գենդերային բյուջետավորում» բաժնում նաև դիտարկվում են կոնկրետ գործիքներ, մեթոդաբանություններ և մոտեցումներ: Եվրոպական տարբեր երկրների փորձն ուսումնասիրելիս ի պարզ, որ գոյություն ունեն մի շարք ընդհանուր մոտեցումներ և գործիքներ, որոնք համապատասխանեցվում են տեղական պայմաններին և սկզբնական իրավիճակին: Այս ձեռնարկում փորձ է արվում ներկայացնել դրանց միասնականությունը, ինչպես նաև մի շարք մոդելներ և շրջանակներ: Ընդհանուր առմամբ դա թույլ է տալիս ամբողջությամբ դիտարկել նշված երեք

փուլերը, ներկայացնելով վերլուծության գործիքները և մեթոդները, բյուջեները գենդերային իրավահավասարության նպատակներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ մեթոդաբանությունները և շրջանակները, ինչպես նաև բյուջետային գործընթացներում գենդերային ռազմավարության արմատավորման համար անհրաժեշտ մեթոդաբանություններն ու մոտեցումները:

Հետևաբար այս բաժինը պետք է դիտարկել որպես միասնական սկզբունք կամ աշխատանքային ծրագիր, որի յուրաքանչյուր փուլ փոխկապակցված է մյուսների հետ, որոնք նպաստում և ուժեղացնում են միմյանց և զարգացնում են ընդհանուր գործընթացը:

Այս ինչպես և բոլոր մյուս բաժիններում բերվում են Եվրոպայի տարբեր երկրներում տարվող աշխատանքի օրինակներ:

Գենդերային բյուջետավորումը տարբեր մակարդակներով

Հաջորդ բաժնում դիտարկվում է կառավարության և ծախսային հողվածների գենդերային բյուջետավորումը, որն իրականացվում է տարբեր մակարդակներով: Նպատակն է ուսումնասիրել յուրաքանչյուր մակարդակի ներքո հնարավոր աշխատանքները՝ հիմնականում իրականացված աշխատանքների օրինակների տեսքով: Պետք է նշել, որ

օրինակներ բերելուց բացի բյուջեի եկամտային մասի գենդերային բյուջետավորման հարցերին մեծ ուշադրություն չի հատկացվում:

Քաղաքացիական հասարակության դերը
Քաղաքացիական հասարակությունը մի շարք դերակատարումներ ունի գենդերային բյուջետավորման հարցերում, հանդես գալով փորձագետի, քարոզչի, հսկողի, իրականացնողի և գործընկերոջ դերերում: Քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի կողմից կիրառվող կազմակերպչական մոդելները, ինչպես նաև դրանց ռազմավարությունները և կառավարության հետ առնչության մակարդակը փոփոխվում են: Ընդհանուր քննարկումից բացի այս բաժնում առանձին դիտարկվում են Եվրոպական երկրներում գործող որոշ կազմակերպություններ:

ԲԱԺԻՆ 2.

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի հիմնական նպատակն է գենդերային բյուջետավորման իրականացման համար պարզ և պրակտիկ ուղեցույցի մշակումը: Պետք է նախ և առաջ նշել, որ գենդերային բյուջետավորումը հասարակ խնդիր չէ, ընդ որում բացակայում են նաև համընդհանուր կիրառելի գործիքները: Ձեռնարկը կազմելիս դարձավ, որ մի շարք մոտեցումներ, հատկապես վերլուծական, նույնպես հիմնված են նմանատիպ սկզբունքների վրա: Ուսումնասիրված գրականությունից երևում է, որ առաջնային խնդիրը մեթոդաբանության մշակումն է, որը կրելու է պրակտիկ և հասցեագրված բնույթ և պատրանքներ չի առաջացնելու ցանկացած նպատակի ծառայող գործիք մշակելու հնարավորության վերաբերյալ:

Այս ձեռնարկում ներկայացված գենդերային բյուջետավորման գործընթացը բաղկացած է երեք տարրերից.

1. Գենդերային իրավահավասարության ուղղությամբ տարվող կանոնավոր աշխատանքի համար անհրաժեշտ առաջնահերթ նախապայմաններ
2. Գենդերային բյուջետավորման ռազմավարության ամրագրման երեք փուլեր
3. Եվրոպական երկրներում գենդերային բյուջետավորման համար կիրառվող գործիքների օրինակներ:

Ցանկություն կարող է առաջանալ անմիջապես անդրադառնալ գործիքներին: Գործիքներն ենթադրում են կանոնակարգված գործընթաց, պրակտիկ աշխատանք, որն ունի սկիզբ, միջանկյալ փուլ և ավարտ, ինչպես նաև սահմանված պարամետրերով մոտեցումների կիրառում: Գենդերային բյուջետավորման գծով տարվող աշխատանքների կարևոր մասը գործիքների կիրառումն է կոնկրետ բյուջետային հոդվածների կամ ընդհանուր բյուջեի մակարդակով, որը նաև կարևոր է գենդերային հարցերի շուրջ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Սակայն գենդերային բյուջետավորման կանոնավոր ընթացքն ապահովելու համար կան մի շարք նախապայմաններ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև աշխատանք տանել գենդերային բյուջետավորմանը ռազմավարական ուղղվածություն հաղորդելու համար:

Գենդերային բյուջետավորման աշխատանքի բոլոր երեք տարրերը պահանջում են շարունակական ուշադրություն: Այդ առումով նման աշխատանքը համընկնում է ազգային բյուջեի պարբերաշրջանային բնույթի հետ:

2.1 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թեպետ այս ենթաբաժինը չի կարող դիտարկվել որպես պրակտիկ գործիք, այնուամենայնիվ այն ներկայացվում է «Ինչպես իրականացնել գենդերային բյուջետավորում» բաժնի ներքո: Վերջինիս ներառումն այստեղ պայմանավորված է սույն ձեռնարկի հիմքում ընկած այն սկզբունքով, որ գենդերային բյուջետավորման արդյունքը կախված է հիմնարար նախապատրաստական աշխատանքից: Նրանք ովքեր ընտրում են գենդերային բյուջետավորման ճանապարհը պետք է լավ պատկերացնեն, որ այն պահանջում է գենդերային իրավահավասարության խնդիրների վերաբերյալ փորձի և գիտելիքների առկայություն: Այն հիմնարար խնդիրները, որոնք դիտարկվում են այս ենթաբաժնում շատ դեպքերում արդեն իսկ ներկայացված են եղել այլ ձեռնարկներում և ուղեցուցային նյութերում:

2.1.1 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Եվրոպայում դեռևս շարունակում է գոյատևել գենդերային անհավասարությունը: Կանայք ավելի ցածր են վարձատրվում, ծանրաբեռնված են չվարձատրվող խնամքի աշխատանքով, ենթարկվում են ֆիզիկական և սեռական բռնությունների, սահմանափակված են աշխատանքային շուկայում ազատ կողմնորոշվելու հարցում և մի շարք այլ առումներով:

Գենդերային անհավասարության դրդապատճառների ընկալումը առանցքային դեր ունի նրա զանազան դրսևորումների դեմ պայքարելու համար: Հասարակությունում, ինչպես նաև պետական հաստատություններում և գործընթացներում, գենդերային հարաբերությունների ձևավորման և զարգացման վերաբերյալ հստակ պատկերացումը և գենդերային անհավասարության վերացման և իրավահավասար հասարակության ստեղծման համար ռազմավարական մոտեցումների անհրաժեշտության գիտակցումը ելակետային կարևորություն ունեն: Այստեղ բավարար չեն կանանց հարցերի գծով իրականացվող հատուկ ծրագրերը և սխեմաները, որոնք միայն ժամանակավորապես մեղմացնում են իրավիճակը կոնկրետ ոլորտում: Հիմնովին սխալ է այն մոտեցումը, որի համաձայն կա-

նայք որպես առանձին պրոբլեմ են դիտարկվում պետական ծրագրերում և հաջողության չափանիշ է համարվում այդպիսի ծրագրերում ներառված կանանց թիվը:

Բյուջեի մակրոտնտեսական քաղաքականության գործիք համարվող գենդերային բյուջետավորման մոտեցումները հիմնված են այն սկզբունքի վրա, որ չվարձատրվող խնամքի տնտեսությունում կանանց դերի, ինչպես նաև խնամքի և շուկայական տնտեսության միջև փոխկապակցվածության մասին հստակ պատկերացումը վճռորոշ դեր ունի ռազմավարությունների և բյուջետային ուղղությունների ձևավկերպման համար:

Գենդերային նախաձեռնությունների գծով փորձը վկայում է, որ կառավարություններն իրենց ծրագրերում դեռևս թերագնահատվում են այն փաստը, որ կանայք գտնվում են ոչ նպաստալի դիրքերում: ԳենդերԱլպ (Gender-Alp) միջազգային գենդերային ծրագրում այդ երևույթը ներկայացվում է որպես «առավելապես լուրջ խնդիրներից և մարտահրավերներից մեկը», իսկ Մյունխենում կատարված հետազոտությունը վկայում է մատուցվող ծառայությունների արդյունավետությունն ըստ թիրախային խմբերի գնահատելու համար անհրաժեշտ գիտելիքների անբավարարության մասին:

2.1.2 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1995 թ. Պեկինում կայացած համաժողովից հետո Գենդերային իրավահավասարության ապահովման ռազմավարությունը որդեգրվեց գրեթե ամենուր: Սակայն ռազմավարության տակ ստորագրելը դա քաղաքական պարտավորություն ստանձնելու միայն առաջին քայլն է և եթե դրան չհետևեն հետևողական ու շարունակական քայլեր, ռազմավարությունը դատապարտված է անհաջողության: Ստանձնած քաղաքական պարտավորությանը հատկացվող ուշադրության ապացույցը դա այդ ուղղությամբ իրականացվող քայլերն են և գործընթացը հսկողության տակ պահելու ունակությունը, որն իր հերթին ենթադրում է տեսլականի սահմանում և գենդերային իրավահավասարության հիմնախնդրի ամրագրում երկրի զարգացման ռազմավարությունում: Գենդերային իրավահավասարության նպատակները սահմանելիս պահանջվում է նպատակային թիրախների տեսքով արտահայտված քաղաքական կամքի հստակ դրսևորում:

Այս եզրակացությունը հիմնված է մի շարք երկրների փորձի վրա: Իսպանիայի Իրավահավասարության նախարարությունն իր զեկույցում նշում է որ «ընդհանուր առմամբ գենդերային բյուջետավորումը, առանց քաղաքական վերնախավի կողմից ձեռնարկվող

կոնկրետ քայլերի, բարի մտադրություններից բացի որևէ այլ արդյունքի չի հանգեցնի»: Ավստրիայի Ֆինանսների նախարարությունում աշխատող Դր. Էլֆրիդե Ֆրիցը նշում է, որ երկրում ստեղծվել է գենդերային բյուջետավորման համար անհրաժեշտ իրավական դաշտը «սակայն այն իրականացնելու համար քաղաքական կամք է պահանջվում»:

2.1.3 ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՍՈՏԵՅԱԿԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Կառավարության գերատեսչություններում և վարչություններում գործառնական պատասխանատվությունը դրված է տարբեր մակարդակի իրավասությամբ օժտված քաղաքական ծառայողների վրա: Աշխատանքային առաջնահերթությունները սահմանվում են բարձր ծանրաբեռնվածության և սահմանափակ ժամանակային պայմաններում: Գենդերային իրավահավասարությունը հաճախ համարվում է ոչ թե առաջնահերթ ուղղություն, այլ զուգընթաց և ուստի լրացուցիչ աշխատանք:

Շվեդիայում կազմված հաշվետվությունում նշվում է, թե որքան դժվար է ղեկավարությանը և պաշտոնյաներին ապացուցել տարբեր ռազմավարությունների արտացոլման իմաստն ու անհրաժեշտությունը իրենց կողմից առաջնահերթ համարվող աշխատանքներում: Երբ աշ-

խատանքներում ներգրավվում են գենդերային հարցերով կոորդինատորներ կամ այդ հարցերի շուրջ ուսուցում է կազմակերպվում, արդյունավետության և միջոցների խնայման պատրվակով կամ առավել նպատակային արդյունքների հասնելու հիմնավորմամբ փորձ է արվում զոհաբերել գենդերային ռազմավարությունը: Նման մոտեցումներից խուսափելու և գենդերային իրավահավասարության սկզբունքը որպես ցանկացած գործունեության հաջողության նախապայման ներկայացնելու համար անհրաժեշտ է վերջինիս նկատմամբ պետության հոգեհարազատ մոտեցում և որպես գերակա ուղղություն որդեգրում: Հյուսիսային երկրների ծրագրի ներքո Նորվեգիայում գենդերային բյուջետավորման հարցերով կազմված հաշվետվությունում նշվում է, որ գենդերային իրավահավասարության հարցերով զբաղվող գերատեսչությունները «պետք է լիազորված լինեն և պարբերաբար շփվեն երկրի ղեկավարության հետ»:

2.1.4 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ

Կարևոր է, որպեսզի գենդերային իրավահավասարության ազգային քաղաքականությունը հաշվի առնի կառավարության յուրաքանչյուր նախարարության և գերատեսչության գործառնական առանձնահատկությունները: Պետության կողմից իրականացվող գենդերային իրավահավասարության քաղաքականության գործնականության աստիճանը կարելի է որոշել ելնելով նրանից թե արդյոք իրականացման ռազմավարության ներքո նախատեսված են արդյունքների գնահատման համար անհրաժեշտ հենանիշներ, թիրախներ և կատարողական ցուցանիշներ:

Համազգային մակարդակով կազմված ծրագրերը պետք է արտացոլում ունենան նաև տեղական մակարդակով: Ինչպե՞ս կարող է կառավարության որևէ գերատեսչություն օժանդակել գենդերային իրավահավասարության նպատակների իրականացմանը, եթե վերջիններս միայն գլոբալ մակարդակով են սահմանվել: Իռլանդիայում գենդերային բյուջետավորման գծով իրականացված հետազոտությունում ներկայացվել էր թե որքան մանրամասն էր արտացոլված երկրի տնտեսական քաղաքականությունը Ռոսքոմոն շրջանի ձեռնարկությունների խորհրդի աշխատանքային ծրագրում, մինչդեռ գենդերային իրավահավասարության վերաբերյալ երկրի քաղաքականությունն այնտեղ ամբողջությամբ անտեսվել էր: Ինչպես ցույց է տալիս Սիենա քաղաքում գենդերային բյուջետավորման գծով իրականացված հետազոտությունը, տեղական մակարդակով հենանիշներ ունենալն ավելի կարևոր է, քան ազգային վիճակագրական տվյալներից օգտվելը:

2.1.5 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԱՋՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Գենդերային ռազմավարության իրականացումը փոփոխություն է պահանջում: Փոփոխություն նշանակում է աշխատանքն այլ կերպ կատարել: Այդ տեսակետից փոփոխությունը ենթադրում է ամենօրյա աշխատանքային գործընթացում գենդերային խնդիրների ներառում: Այն նաև նշանակում է նոր գործընթացների ընդգրկում: Նման փոփոխությունները բնութագրվում են որպես կազմակերպչական փոփոխություն կամ զարգացման գծով աշխատանք: Ավստրիայի Գռաց քաղաքում կատարված հետազոտությունում նշվում է «Գենդերային իրավահավասարության ռազմավարությունը նախ և առաջ կազմակերպչական զարգացման գործիք է… որի հիմնական նպատակն է փոխել կազմակերպության ներքո գործող կառույցները և գործընթացները»:

Շվեդիան և Նորվեգիան առաջատար տեղերում են գտնվում գենդերային իրավահավասարության ռազմավարությունը և գենդերային բյուջետավորումը որպես կազմակերպչական զարգացման աշխատանք ներկայացնելու հարցում: Շվեդիայում գենդերային իրավահավասարության ռազմավարության հարցերով

հանձնաժողովը (JämStöd) մշակել է «Սանդուղկ» անվանմամբ գործիքների և մեթոդների համապարփակ փաթեթ, ելնելով նրանից, որ գենդերային իրավահավասարության ռազմավարությունը պահանջում է կազմակերպչական զարգացման աշխատանք: JämStöd-ի նախագահը նշում է, որ գենդերային իրավահավասարության ռազմավարությունը չի արմատավորվել այնտեղ, որտեղ համակարգային մոտեցումներ չեն ցուցաբերվել:

Սանդուղկ՝ կայուն գենդերային իրավահավասարության ռազմավարության ընթացակարգ

ՅամՍտոդ, Շվեդիա

2007 թ. Եվրոպայի խորհրդում կայացած շնորհանդեսի ժամանակ (Գենդերային իրավահավասարության ռազմավարության հարցերով ոչ-պաշտոնական ցանցի 7-րդ հանդիպում), ՅամՍտոդի նախագահ Անեթ Բոմանը բացատրել է, որ «սանդուղկը կառուցվել է գենդերային իրավահավասարության ռազմավարության ուղղությամբ տարվող աշխատանքի բարդությունը ներկայացնելու նպատակով»:

Սանդուղկի 8 աստիճաններն են.

Աստիճան 1. Հիմնարար ընկալում
Անձնակազմն ուսուցում է անցնում գենդերի և գենդերային իրավահավասարության, մասնավորապես Գենդերային իրավահավասարության գծով համազգային քաղաքականության հարցերի շուրջ:

Աստիճան 2. Պայմանների ուսումնասիրություն
Այս փուլը կարելի է նմանացնել դիտորդական վարժության, որի ընթացքում անձնակազմն ուսումնասիրում է գենդերային տեսակետից իրավահավասար կազմակերպության

բնութագիրը, նշելով աշխատանքային առավելությունները և այն թիրախային խմբերը, որոնք շահառուի դերում են հանդես գալիս:

Ստրիճան 3. Պլանավորում և կազմակերպում
Այս փուլի իրականացումն առաջնորդվում է ավագ ղեկավարության կողմից, որը մշակում է ռազմավարությունը՝ արտացոլելով հստակ նպատակները և հսկման մեխանիզմները:

Ստրիճան 4. Արդյունքների ամփոփում
Այս փուլում ամփոփվում են կազմակերպության աշխատանքները և որոշումներ են կայացվում անհրաժեշտ բարեփոխումների մասին:

Ստրիճան 5. Հետազոտում և վերլուծություն
Աշխատանքների ամփոփման արդյունքները ծառայում են կազմակերպության գործունեությունը գենդերային տեսակետից վերլուծելու համար:

Ստրիճան 6. Նպատակների և միջոցառումների ֆիքսում
Կազմակերպությունը պատրաստում է գործողությունների ծրագիր՝ սահմանելով գենդերային իրավահավասարության գծով աշխատանքների նպատակները, ցուցանիշները և միջոցառումները:

Ստրիճան 7. Միջոցառումների իրականացում
Կազմակերպությունն իրականացնում է գենդերային իրավահավասարության հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները:

Ստրիճան 8. Արդյունքների գնահատում
Իրականացվում է գնահատման գործընթացը, դիտարկվում են նվաճումները, հաշվի են առնվում թույլ տրված սխալները, սահմանվում են նոր մարտահրավերներ, բարեփոխում պահանջող ոլորտներ և այլն:

Գենդերային իրավահավասարության ռազմավարության ֆեռնարկի ամբողջական տարբերակին կարելի է ծանոթանալ հետևյալ ինտերնետային էջում.
http://www.sweden.gov.se/sb/d/574/a/81982

2.1.6 ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Տվյալների հավաքագրման և կառավարման հարցերում առկա զգալի թերությունները խոչընդոտում են գենդերային վերլուծությունների անցկացումը: Որոշ դեպքերում նույնիսկ չի իրականացվում պետական ծառայություններից օգտվող շահառուների առանձին հաշվառում ըստ սեռի: Հաճախ դրա պատճառն այն է, որ սեռային ապախոշորացմամբ տվյալների կարիքը ազգային վիճակագրական ծառայությունից բացի այլ հիմնարկներում չի զգացվում:

Սակայն տվյալների գենդերացումը միայն սեռային բաշխվածությամբ տվյալների հաշվառում չէ: Օրինակ զբաղվածության և աշխատուժի վերաբերյալ վիճակագրական տվյալներից հաճախ դժվար է դատել գործազրկության բնույթի և որակի, ինչպես նաև գենդերային անհավասարության հնարավոր աղբյուրների մասին: Նման վերլուծությունը պահանջում է հնարավորությունների, աշխա-

տանքային տարբերակման, պայմանագրերի տեսակների, աշխատավարձերի, աշխատանքային ժամերի ճկունության և այլ նման վիճակագրական տվյալների առկայություն: Միջազգային աշխատանքի կազմակերպությունը նշում է գործարաններում աշխատող կանանց վերաբերյալ տվյալների բացակայության մասին:

Վիճակագրական ծառայությունների և քաղաքականություն մշակողների միջև այդ ուղղությամբ համագործակցություն չի նկատվում, որն անհրաժեշտ է ինչպես վիճակագրական ծառայություններին, լավ պատկերացնելու, թե ինչ տվյալներ են անհրաժեշտ քաղաքականություն մշակողներին ծրագրերի հասցեագրվածությունը բարձրացնելու համար, այնպես էլ քաղաքականություն մշակողներին, քանի որ վիճակագրական ծառայություններն ավելի լավ են իրազեկված գենդերային տեղեկատվության հավաքագրման հետ կապված խնդիրների մասին:

Որոշ երկրներում, որտեղ ստեղծվել է գենդերային իրավահավասարության և/կամ գենդերային բյուջետավորման հարցերը կարգավորող իրավական դաշտ, սահմանվել են գենդերային ապախոշորացմամբ տվյալների հավաքագրման հատուկ կանոններ:

2.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԵՐԵՔ ՓՈՒԼԵՐԸ

Գենդերային բյուջետավորումը դիտարկվել է տարբեր անկյուններից ու տարբեր ենթատեքստում և հիմնվել է տարբեր ակնկալիքների վրա: Այդ հարցի շուրջ գոյություն ունեցող գրականությունը զանազան մոտեցումներ է առաջարկում գենդերային բյուջետավորման բնույթի մասին: Այդ ամենը հասկանալի է հաշվի առնելով գենդերային բյուջետավորման գործընթացի նոր լինելը և այն արագությունը, որով այն սկսեց զարգանալ: Ավելի կարևոր է այն, որ ամբողջ Եվրոպայում այդ ուղղությամբ զգալի աշխատանք է իրականացվել: Այդ աշխատանքի շնորհիվ ներկայումս ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որից ելնելով անհրաժեշտ է աջակցել արդեն իսկ իրականացված քայլերին, խրախուսել նոր քայլերի կատարումը և խորացնել գենդերային բյուջետավորման արմատավորման գործընթացը:

Ինչպե՞ս ենք մենք «իրականացնում գենդերային բյուջետավորումը»: Ելնելով 1-ին Բաժնում տրված սահմանումից, ըստ որի գենդերային բյոջետավորումը համարվում է գենդերային իրավահավասարության ռազմավարության գործիք, տրամաբանական կլինի, որպեսզի այն բաղկացած լինի մի քանի փուլերից, որոնք ներկայացված են ստորև.

- Փուլ 1 – բյուջետային վերլուծություն գենդերային հեռանկարի հիման վրա

- Փուլ 2 – բյուջեի կառուցվածքի փոփոխություն գենդերային վերլուծության հիման վրա

- Փուլ 3 – գենդերի արմատավորում որպես բյուջետային գործընթացների վերլուծության դասակարգի

Փուլ 1

Փուլ 1-ը առաջին անհրաժեշտ քայլն է, քանի որ նախ և առաջ պետք է ցույց տալ, որ տղամարդիկ և կանայք գտնվում են բյուջեի ազդեցության տակ, որը տարբեր ձևով է անդրադառնում նրանց վրա, մինչդեռ տնտեսագետները և ֆինանսիստները գործ ունեն դրամական տեսք կրող փոփոխական մեծությունների և ֆինանսական միավորների հետ, բյուջեի վերջնական արդյունքը դեպի ***մարդու կարիքներին միտված*** ծառայությունները, տրանսֆերտները և աշխատավարձերն են: Վերլուծության առաջին մակարդակն է ըստ սեռի ապախոշորացված բյուջետային ծրագրեր օգտագործողների կամ շահառուների գծով ուսումնասիրությունը: Գենդերային հարցերի խորը ուսումնասիրության դեպքում վերլուծությունը կարող է ցույց տալ.

1) որքանո՞վ է բյուջեն բավարարում ստացողների կարիքները,

2) ինչպե՞ս են ստացողների գենդերացված կարիքները և դերերը ազդում բավարարվածության մակարդակի վրա
3) թիրախային խմբերում ծառայություններից օգտվողների խնդիրները և կարիքները
4) ի՞նչ աստիճանով է բյուջեն նվազեցրել, ավելացրել կամ անփոփոխ թողել գենդերային անհավասարությունը
5) սահմանված ռազմավարությունների, մասնավորապես գենդերային իրավահավասարության գծով և բյուջետային որոշումների միջև կապը և, ավելի հաճախ՝ ճեղքվածքը
6) ինչո՞ւ բյուջեն պետք է հաշվի առնի խնամքի տնտեսությունում կանանց և տղամարդկանց մասնակցության տարբեր աստիճանը.

Բազել քաղաքում կատարված գենդերային բյուջեի ուսումնասիրություն

BASS-ի հետազոտության ներքո կիրառված մեթոդաբանությունը զարգացնելու և կատարելագործու նպատակով կատարված ուսումնասիրությունը հաստատվել և ֆինանսավորվել էր Բազելի քաղաքի կանտոնի խորհրդարանի կողմից: Ուսումնասիրությունը հրապարակվել է 2003 թ.: Այս դեպքում վերլուծությունը ավելի շատ վերաբերում էր բուն բյուջեին, այլ ոչ բյուջետային կրճատում-

ներին: Սեռային ապախոշորացմամբ բյուջետայի վերլուծությունը հանգեցրեց պետական ծախսերի շահառուների գնահատման գաղափարի լուրջ ուսումնասիրության:

Բազելյան վերլուծությունը գենդերային բյուջետավորման գծով Եվրոպայում իրականացված սակավաթիվ հետազոտություններից է, որտեղ կատարվել է չվարձատրվող աշխատանքի վրա բյուջետային որոշումների ազդեցության խորքային վերլուծություն: Թեպետ գենդերային բյուջետավորման հարցերով բոլոր նյութերում ընդգծվում է այդ խնդրի կարևորությունը, սակայն նման մակարդակի վերլուծություն կատարելուն խանգարում են մի շարք հանգամանքներ: Դրանց թվում են ժամանակի ծախսման վերաբերյալ տվյալների բացակայությունը, ինչպես նաև ոչ-շուկայական համարվող արտադրության պաշտոնական անտեսումը:

Վերլուծությունը սկսվում է սոցիալական ապահովության տնտեսության ներքո չվարձատրվող աշխատանքի կարևորության հիմնավորումից, որից հետո դիտարկվում է դրա վրա բյուջետային քաղաքականության ազդեցությունը:

Աղյուսակ. *Բազելում 15 տարեկանից ցածր տարիքի երեխաներ ունեցող և երեխաներից զուրկ բնակչության կողմից կատարված չվարձատրվող աշխատանքը 2000 թվականին (ըստ տարեկան ժամերի և աշխատող անձի)*

Երեխաներ ունեցող/ երեխաներից զուրկ անձը և չվճարվող աշխատանքի տեսակը	Տղամարդիկ և կանայք	Կանայք	Տղամարդիկ
	Ժամերն ըստ 1 անձի և 1 տարվա	Ժամերն ըստ 1 անձի և 1 տարվա	Ժամերն ըստ 1 անձի և 1 տարվա
15 տարեկանից ցածր տարիքի երեխաներ ունեցող անձինք Տնային աշխատանք Խնամքի բնույթ կրող աշխատանք Ընդամենը	1,184 719 2,639	1,738 901 2,639	582 522 1,103
15 տարեկանից ցածր տարիքի երեխաներից զուրկ անձինք Տնային աշխատանք Խնամքի բնույթ կրող աշխատանք Ընդամենը	959 316 992	1.130 371 1,167	761 254 788
Երեխաներ ունեցող անձինք երեխաներից զուրկ անձանց համեմատ Երեխաներից զուրկ անձինք (=100%) Տնային աշխատանք Ընդամենը	123.4 191.9	153.8 226.1	76.4 140.1

Աղբյուր. Schweizerische Arbeitskrafteerhebung (SAKE) 2000
(Հաշվարկները. A. Pfeifer and M. Madoerin)

Աղյուսակ, *Չվարձատրվող աշխատանք և բյուջետային ծախսեր Բազել քաղաքի կանտոնում (2000 թ.)*

	Շվեյցարական ֆրանկ (x1 մլն)	Շվեյցարական ֆրանկ (x1 մլն) Կանանց չվարձատրվող աշխատանք
Չվարձատրվող աշխատանք համարվող տնային աշխատանք		
Տնային աշխատանք Բազել քաղաքի կանտոնում	4,238.5	2,777.8
Խնամքի բնույթ կրող աշխատանք (ընտանիքի ներքո)	922.0	591.2
Հարևաններին, ընկերներին, բարեկամներին մատուցված ծառայություններ	224.0	145.1
Կամավոր բնույթ կրող աշխատանքներ	295.4	99.5
Ընդամենը	5,679.9	3,613.7
Բյուջետային ծախսեր Բազել քաղաքի կանտոնում		
Անձնակազմի գծով ծախսեր (հիվանդանոցներ)	502.0	
Անձնակազմի գծով ծախսեր (մանկապարտեզներ, հանրային դպրոցներ, մասնագիտական խորհրդատվություն, վերապատրաստում)	179.1	
Ընդամենը ծախսեր անձնակազմի գծով (բոլոր քաղծառայողները Բազել քաղաքի կանտոնում)	1,637.3	
Ընդամենը	3,690.8	

Աղբյուր.Glichstellungsbuero, Stat. Amt und Frauenrat des Kantons Basel-Stadt (ed.) (2003): Der kleine Unterschied in den Staatsfinanzen, Geschlechterdifferenzierte Rechnungsanalysen im Kanton Basel-Stadt, էջ 127:

Քայլ 2

Քայլ 2-ի նպատակն է գենդերային խնդիրները հաշվի առնելու համար բյուջեի կառուցվածքային փոփոխություն կատարելը: Երբ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բյուջետային միջոցները գենդերային տեսանկյունից արդարացի չեն բաշխվել, անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություններ կատարել բյուջեում, այդ անարդարությունը վերացնելու համար: Երբ բյուջետային միջոցների բաշխումը չի համընկնում կառավարությունների գենդերային իրավահավասարության քաղաքականությունների հետ, անհրաժեշտ է կատարել վերջիններիս համապատասխան վերաձևակերպում: Այն բանից հետո, երբ ի հայտ է գալիս բյուջեի անհավասար ազդեցությունը կանանց և տղամարդկանց նկատմամբ, պարտավորություն է առաջանում բյուջետային գործընթացներում ներառել գենդերը որպես վերլուծական կատեգորիա: Որոշ դեպքերում կառուցվածքի փոփոխությունը կարող է նշանակել դրական գործնական միջոցառում՝ խնդրի լուծման համար հատուկ առանձնացված գումարի տեսքով: Սակայն ժամանակավոր կամ մեկ անգամյա լուծումները չեն կարող ամբողջությամբ վերացնել գենդերային վերլուծության ժամանակ ի հայտ եկած բյուջեի գենդերային կողմնակալության հիմնախնդիրը: Բյուջեների

վերլուծությունը գենդերային ազդեցության տեսանկյունից պահանջում է վերանայել ֆինանսավորման ամբողջ ռազմավարությունը, ամբողջական լուծում տալով անհավասարության վերացման խնդրին և բարձրացնելով ծախսերի հասցեագրվածությունը:

Անդալուզիա

I2007 թ. հոկտեմբերին, Անդալուզիայի Ինքնավար Շրջանի Բյուջեի գենդերային ազդեցության հարցերով հանձնաժողովը հրապարակեց իր երրորդ տարեկան հաշվետվությունը: Այդ ծավալուն և մանրամասն փաստաթուղթը կոչ է անում երկու հիմնարար փոփոխություններ իրականացնել Շրջանի գենդերային բյուջեի գծով աշխատանքում:

- նախ և առաջ, հաշվի առնել գենդերային հետևանքները ոչ միայն բյուջեի նախապատրաստական փուլում, այլ նաև կազմված բյուջեի ներքո
- երկրորդը՝ ստեղծել մշտական քարտուղարություն, որը Հանձնաժողովին թույլ կտա ավելի մեծ ճկունություն դրսևորել լծակների կիրառման, կառավարման և կոորդինացման հարցերում:

Հաշվետվությունում կա նաև մեթոդաբանական կատարելագործման բաժին՝ G+ Ծրագիր: Այդ ծրագրի ներքո մշակվել է գենդերային իրավահավասարությանը նպաստող բյուջետային ծրագրերի դասակարգման համակարգ, որի հիման վրա ընտրվում են առաջնահերթ ծրագրերը: Ծրագրերի դասակարգման համար կիրառվում են չորս չափանիշներ.

- ներդաշնակցելու հնարավորություն
- լայնածավալ ազդեցության հնարավորություն
- գենդերային անհավասարության նվազեցման հնարավորություն
- շրջանային կառավարման մարմիններում անձնակազմի հարցերով իրականացվող քաղաքականության հետ փոխկապակցվածություն

Յուրաքանչյուր ծրագրի որականիշը տրվում է ըստ ստորև սահմանված սանդղակի.

G+ սանդղակ

Գենդերային դյուրազգացություն		
Աստիճան	Այո	Ոչ
Ցածր	g1 Հիմնականում կազմակերպության սահմաններում կամ ժամանակավոր ազդեցություն ունեցող ծրագրեր	g1 Ծրագրեր, որոնք մարդկանց վրա ուղղակի ազդեցություն չեն թողնում և ունեն ցածր կամ անէական ու անուղղակի ազդեցություն

Միջին	G Ոչ բարցր ազդեցությամբ ծրագրեր, որոնք դժվարությամբ են ներդաշնակեցվում և ունեն սահմանափակ գործառութային կիրառում	
Բարձր	G+ Բարձր ներդաշնակեցման ներուժի և հստակ գործառնային կիրառելիության շնորհիվ մեծ հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր	

Գնահատման գործընթացը դիտարկում է հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ տարածքային կառավարման մարմինների կողմից բոլոր բյուջետային հոդվածների գծով տրամադրվող տեղեկատությունը, ծառայություններից օգտվող բնակչության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվությունը և դրա վերլուծությունը: Այնուհետև իրականացվում է ցուցանիշների սահմանման, ուսումնասիրությունների պատվիրակման, ռազմավարական նպատակների և գործողությունների մշակման, գնահատման և մոնիտորինգային համակարգերի զարգացման գծով աշխատանք:

Մեթոդաբանության կատարելագործումը և կիրառմանը նպաստող նոր կազմակերպչական կառուցվածքը նպատակ են հետապնդում

ձևավորել վերլուծական այնպիսի համակարգ, որը կարող է պրակտիկ կիրառում ունենալ յուրաքանչյուր կազմակերպության ամենօրյա աշխատանքում, հիմնված լինի պարզ և հասարակ չափորոշիչների վրա, միևնույն ժամանակ լինելով դյուրին և մատչելի յուրաքանչյուր կազմակերպության վերլուծողական կարիքների համար:

Կառավարման և կոորդինացման կառույցների հարցում ծրագիրը «անցում է կատարում ավանդական ուղիներից և կիրառում է նոր մոտեցումների ու արժեքների»: Մանրամասն դիտարկվում են.

- ուսուցման նոր գործընթացները
- փոփոխվող արժեքները, առաջնահերթությունները և ստերեոտիպերը
- տեխնիկական օժանդակությունը
- ներքին իրազեկման գծով միջոցառումները
- ուսուցումը
- փոփոխության դինամիկան արագացնելու համար արդյունքների արագ ընկալումը:

Ձեռնարկն ընդհանուր առմամբ կարելի է համարել ռազմավարության փոփոխության առաջարկ, որը նախատեսում է ոչ միայն գենդերային հիմնախնդրի ընդհանուր ներդրում, այլ նաև աշխատանքային գործընթացներում և համակարգերում գենդերային սկզբունքների արմատավորում: Առաջարկվող փոփոխու-

թյան գործընթացը հիմնված է և հաշվի է առնում գենդերային անհավասարության և խտրականության դեմ պայքարելու գործընթացների թերությունները:

Գոյություն ունի սակայն մեկ չափազանց լուրջ բացթողում, այսինքն՝ ծառայություններից օգտվող կանանց հետ հետադարձ կապի բացակայություն: Միջոցներ են հատկացվել գենդերային հարցերով փորձագիտական խումբ կազմավորելու համար և Հանձնաժողովի կառույցում գործում է Կանանց ինստիտուտը: Այնուամենայնիվ, ծրագրի վերջնական շահառու հանդիսացող կանանց կարծիքին ծանոթանալու համար մեխանիզմների մասին ի սպառ բացակայությունն ակնհայտ է: Ցանկացած մակարդակի ծրագրում օգտագործողի արձագանքի հիման վրա գնահատման մեխանիզմների բացակայությունը հակասում է լավ կառավարման սկզբունքին, առավել ևս գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման հարցում կանանց մասնակցությունը դիտարկվում է ոչ միայն որպես նպատակ, այլ իբրև ծրագրի անհրաժեշտ բաղադրիչ:

Գենդերային բյուջետավորման ծրագրում դիտարկվում է նաև Գենդերային բյուջեի ազդեցության հարցերով հանձնաժողովի կազմը և գործառույթը շրջանային վարչակազմի ներքո: Հանձնաժողովի բոլոր անդամները պետք է

քաղծառայողներ լինեն, Հանձնաժողովը տեղակայված է և ղեկավարվում է շրջանի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կողմից: Դա պատճառաբանվում է նրանով, որ այն «բյուջետային ողջ գործընթացը բանակցելու, ուղղորդելու ու մոնիտորինգի ենթարկելու գծով ընդհանուր պատասխանատվություն կրող վարչությունն է», ուստի այդ քայլը կապահովի գործընթացի օպտիմալ վերահսկելիությանը:

Քայլ 3.

Գենդերային բյուջետավորումը վերաբերում է ոչ միայն բյուջեի բույն բովանդակությանը, այլ նաև բյուջեյի ձևավորման գործընթացներին: Այն դիտարկում է թե ինչպես են կայացվում բյուջետային որոշումները, ինչպիսի փաստարկներ են ընկած դրա հիմքում, ովքեր են կայացնում բյուջետային որոշումները և ովքեր են զրկված այդ գործընթացի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունից: Գենդերային իրավահավասարության խթանումը պահանջում է վերանայել այն կառույցները և գործընթացները, որոնք նպաստում կամ հաճախ ոչ-կանխամտածված ձևով առաջացնում են գենդերային անհավասարությունը: Համակարգը, որը գենդերային տեսանկյունից չեզոք է համարվում, սակայն իրականում տառապում է գենդերային կուրությամբ և գենդերային կողմնակալությամբ, պետք է փոփոխվի և

դառնա գենդերային հարցերի նկատմամբ դյուրազգաց և հոգատար: Այդ աշխատանքը կատարվում է 3-րդ փուլում, ծրագրին ռազմավարական միտվածություն հաղորդելու ժամանակ, որն անհրաժեշտ է 1-ին և 2-րդ փուլերի աշխատանքը միաժամանակյա վարժության վերածելուց և արդյունքները կորցնելուց խուսափելու համար: Ռազմավարական միտվածության ապահովումը շարունակական գործընթաց է և գենդերային բյուջետավորման տեսակետից այն պահանջում է գենդերային խնդիրների հանդեպ շարունակական նվիրվածություն, որը ենթադրում է շարունակական վերլուծություն և խորհրդատվություն, ինչպես նաև բյուջետային ճշգրտումներ որոք անհրաժեշտ են կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների փոփոխվող կարիքները հոգալու համար:



2.3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

2.3.1 ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գենդերային բյուջետավորման գործընթացի առաջին քայլը պետական ծախսերի վերլուծությունն է գենդերային հեռանկարի տեսակետից: Պետական բյուջեի գենդերային դյուրազգացության աստիճանը գնահատելու համար նախ և առաջ պետք է իմանալ թե քանի կին և տղամարդ, աղջիկ և տղա են ստանում պետական դրամական օգնություն: Սեռերի միջև պետական ծախսի բաշխվածությունից բացի վերլուծությունը պետք է տեղեկատվություն ներառի այն մասին, թե ինչպես է գենդերը կանխորոշում կարիքները: Այդ տեղեկատվությունը վերաբերելու է վերլուծության առարկա հանդիսացող ոլորտին և աշխարհագրական տարածքին: Ստորև ներկայացվում է թե ինչպես բազային վերլուծությունից կարելի անցնել գենդերի, որպես մշտական վերլուծության դասի, ձևակերպմանը:

BASS-ի վերլուծություն, Շվեյցարիա

Շվեյցարիայում անցկացված և մեծ ուշադրության արժանացած գենդերային բյուջետավորման գծով ուսումնասիրությունը

հրապարակվեց 1996 թ. և կրեց BASS-ի վերլուծություն անվանումը: Այդ ուսումնասիրությունը համեմատում է բյուջետային ծախսերի կրճատման բացասական ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: Նման ուսումնասիրություն անցկացնելու նախաձեռնությամբ հանդես էին եկել Շվեյցարիայի պետական ծառայության կին ներկայացուցիչները (VPOD-Frauen), Գենդերային իրավահավասարության Շվեյցարական համաժողովի պատվիրակները և Պետական ծառայությունների ֆեդերացիան, բույն ուսումնասիրությունն անց էր կացրել Աշխատանքի և սոցիալական քաղաքականության հարցերի Շվեյցարիայի կենտրոնը (BASS), որը դիտարկել էր 1984-1994 թթ. տաս տարիների ժամանակահատվածում կատարված պետական ծախսերը:

Վերլուծություն անց էր կացվել ըստ երեք չափորոշիչների.

1. Պետական ծախսերի շահառուները
- Ծախսերի գործառնական դասակարգում ըստ կանանց, աղջիկների, տղամարդկանց և տղաների խմբերի վրա ազդեցության. ա) գենդերային չեզոք, բ) հիմնականում կանանց և աղջիկների օգտին, գ) հիմնականում տղամարդկանց և տղաների օգտին:
- Յուրաքանչյուր տարվա համար բոլոր երեք խմբերին հատկացված ընդհանուր գումարներ:

- 10 տարիների ընթացքում արձանագրված միտումների համեմատական վերլուծություն:

2. Տարբեր ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա:
- Տարբեր ազդեցություն քաղաքացիական ծառայության ոլորտում աշխատող կանանց և տղամարդկանց վրա:
- Տարբեր ազդեցություն պետական գնումների ոլորտում աշխատող կանանց և տղամարդկանց վրա:

3. Ազդեցությունը չվարձատրվող աշխատանքի վրա:
- Բոլոր ծախսային հոդվածներն ըստ չվարձատրվող աշխատանքի վրա ազդեցության(ենթադրվող կամ հաշվարկված):
- «0»-ն ցույց է տալիս կանանց չվարձատրվող աշխատանքի վրա ազդեցության բացակայությունը:

Վերլուծությունը ցույց տվեց, որ պետական ծախսերն ըստ կանանց և տղամարդկանց տարբեր մակարդակներում շատ անհավասար են բաշխված:

Աղյուսակ. *BASS-ի Բյուջեի գենդերային դյուրազգացության վերլուծությունում կիրառված մեթոդաբանություն (Bauer.Baumann 1996:22ff)*

Քայլեր	Խնդիրներ/օրինակներ
Տվյալների ձեռք բերում	Ըստ մեկ տարուց ավել ժամանակահատվածի համար կազմված բյուջեների գործառնական դասակարգման (ըստ պետության պարտավորությունների), օրինակ՝ ընդհանուր բնույթի պետական ծառայություններ, երկրի անվտանգություն, կրթություն և այլն:
Ծախսային հոդվածների դասակարգումն ըստ. ա) Զբաղվածության բ) Օգուտի գ) Կանանց չվարձատրվող աշատանքի	ա) Արդյոք նախատեսված միջոցառումը զբաղվածության ավելի մեծ կամ հավասար հնարավորություն է ստեղծում տղամարդկանց կամ կանանց համար բ) Արդյոք նախատեսված միջոցառումից ավելի մեծ կամ հավասար օգուտ են ստանում կանայք և տղամարդիկ գ) Արդյոք պետական ծախսերի կրճատումը հանգեցնում է կանանց ավելի մեծ ներգրավմանը չվարձատրվող աշխատանքում:
Տարբերությունների հաշվարկ	Ծախսերի կրճատման համեմատություն ելակետային պահին գոյություն ունեցող ծախսային մակարդակի հետ. ընդհանուր ծախսի համեմատ ինչպիսի զարգացում են ստացել առանձին հոդվածները դիտարկվող ժամանակահատվածում:

Քաղաքականության համապատասխանություն	Նպատակն է գենդերային իրավահավասարության հարցի նկատմամբ ապահովել լուրջ մոտեցում՝ այն պետական ծախսերը, որոնցից տղամարդիկ երկար տարիներ ավելի մեծ օգուտ են քաղել քան կանայք, պետք է վերաբաշխվեն:

Կարևոր է նաև հաշվի առնել, որ այս ուսումնասիրության նպատակն է եղել կանանց վրա բյուջետային ծախսերի կրճատման ազդեցությունը վերլուծելու համար: Մասնավորապես, պատասխան պետք է տրվեր այն հարցին, թե արդյոք պետական ծախսերի տնտեսումը կանանց հաշվին չի արվում: Ուսումնասիրությունը չէր դիտարկում պետական ծախսերի տարբեր ազդեցությունը կանանց և տղամարդկան վրա: Թեպետ այդ մեթոդն ուղղակիորեն չի առնվում գենդերային իրավահավասարությունը որպես ռազմավարություն ձևակերպելու հարցի հետ (Madoerin 2007 թ.), այնուամենայնիվ այն թույլ է տալիս վերլուծել պետական ծախսերի մակրոտնտեսական և մեզոտնտեսական ազդեցությունը սեռերի միջև հարաբերությունների վրա:

Այս ուսումնասիրությունն իրականացվել է կառավարության շրջանակներից դուրս, օգտագործելով հանրության համար ազատ հասանելի տեղեկատվությունը: Որպես ադպիսին, այն կարող է ծառայել որպես բացատրական աշխատանք տանելու նպատակով

տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մոդել: Տվյալների առկայության տեսակետից լուրջ խնդիրներ էին առաջացել: Ուսումնասիրության ներքո նաև կատարվում է պետական գնումների հատվածում զբաղվածության վրա ազդեցության վերլուծություն, որը, «հաշվի առնելով պետական ծառայությունների պատվիրակումն ու մասնավորեցումը, կարևոր ցուցանիշ է» (Madoerin 2007 թ.):

2.3.2 ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՏԵՑՈՒՄ. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացվող ընթացակարգը շահառուների կառուցվածքի վերլուծություն է, որը քանակական վերլուծության հիմնական գործիք է հանդիսանում: Վերջին տասնամյակում մի շարք Եվրոպական երկրներում գենդերային բյուջեի գծով նախաձեռնությունները օգտվել են այդ մոտեցումից, այն համապատասխանեցնելով տեղական առանձնահատկություններին և ելակետային իրավիճակներին: Տարրական մակարդակով այն հանդիսանում է ծախսի միավորի հաշվարկ:

Շահառուների կառուցվածքը խոշորացված մակարդակով
Շվեյցարիայում անցկացված BASS ուսումնասիրությունում շահառուների կառուցվածքի վերլուծությունը իրականացվել է ամբողջ երկրի կտրվածքով, օգտագործելով այդ պահին առկա տեղեկատվությունը:

Նկարագրությունը

- Կարող է կիրառվել խոշորոցված տեսքով, ինչպես նաև առանձին բյուջետային հոդվածների համար:
- Խոշորացված մակարդակով տեղեկատվությունը կարելի է ստանալ ազգային վիճակագրական ծառայությունից: Որպես ապախոշորացված տեղեկատվության օրինակ կարող է հանդիսանալ հաշվետու ժամանակահատվածում տարրական կրթության գծով հատկացված գումարը և աշակերտների թիվը:
- Կարող է անցկացվել առանձին բյուջետային հոդվածի գծով, օրինակ՝ առողջապահության ծախսեր կամ զբաղվածության վերականգնման ծրագիր, վերապատրաստման դասընթացների մասնակցության խրախուսման ծրագիր, գյուղական վայրերում ճանապարհաշինական ծրագիր և այլն:
- Տարրական մակարդակով դա ուղղակի պարզ հաշվարկ է:
- Առավել հաճախ այն կիրառվում է գենդերային բյուջեի գծով փորձնական ծրագրերում:

Նպատակը

- Բացահայտել, թե որքանով են կառավարության կողմից մատուցվող ծառայությունները, ուստի ծախսը, միտված դեպի կանանց և տղամարդկանց շահերը:
- Ցուցադրելով տարբերակված մոտեցում, բարձրացնել իրազեկվածությունը գենդերային խնդիրների նկատմամբ:

- Ապացուցել, որ բյուջետային որոշումները պետք է լինեն գենդերային դյուրազգաց:

Ընթացակարգը

- Բյուջետային ներդրման չափի (ծախսված գումարի) սահմանում:
- Շահառուների կամ օգտագործողների թվի հաշվարկ:
- Միավորի ծախսի, այսինքն՝ ըստ մեկ շահառուի կատարված ծախսի որոշում:
- Ապախոշորացում ըստ սեռի, այսինքն՝ ծախսերից օգտվող կանանց և տղամարդկանց թվի:

Արդյունքը

- Կատարված ծախսերի դիտարկում ըստ շահառուի սեռի:

Ծանոթություն

- Արդյունքները կարող են վկայել տարբեր սեռերի միջև ծախսերի անհավասար բաշխվածության մասին,
- Ուսումնասիրությունը բացահայտում է դիտարկման և վերլուծության կարիք ունեցող մի շարք ոլորտներ,
- Ինչպիսի՞ լրացուցիչ տեղեկատվություն է անհրաժեշտ ծախսերի տարբերակված ազդեցությունն ավելի լավ պատկերացնելու համար:

Շահառուների կառուցվածքի վերլուծություն

Ուսումնասիրության արդյունքների կիրառումը պետական գերատեսչությունների գործունեության ծրագիրը կազմող բյուջետային հոդվածների նկատմամբ թույլ է տալիս ստեղծել ավելի ընդլայնված պատկերացում, որն իր հերթին ավելի խորը բնույթ է հաղորդում վերլուծությանը: Լրացուցիչ դիտարկման ենթակա հարցերն են.

- Արդյո՞ք մեկ ծրագրի գծով անհամաչափությունները չեզոքացվում են մեկ այլ ծրագրի ավելի հավասարակշիռ մոտեցման շնորհիվ:
- Արդյո՞ք անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ կանանց և տղամարդկանց ներգրավման համար այն ծրարերում, որտեղ իրենք անհամաչափ են ներկայացված:
- Ի՞նչ դասեր կարելի է քաղել այն ծրագրերից, որոնց միջոցներն ավելի հավասարակշիռ են բաշխվում կանանց և տղամարդկանց միջև:
- Ո՞րն է տարբեր ծրագրերի ազդեցությունը չվարձատրվող խնամքի տնտեսության վրա:
- Ինչպե՞ս կարելի է ավելի արդյունավետ բաշխել միջոցները կանանց վրա ընկնող խնամքի բեռը մեղմացնելու համար:

2.3.3 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Վերլուծությունը տարրական քանակային վարժությունից բացի այլ ուղղություններով տանելու համար կարելի է դիտարկել մի շարք այլ հարցեր: Օրինակ կարելի է ներառել այլ հեռանկարային ուղղությունները, մյուս վարչություններում աշխատող մասնագետներից

ստացվող տվյալները, շահառուների, ծառայությունների կարիք զգացող հասարակության անդամների, հասարակական կարգով իրավահավասարության հարցերով զբաղվող մարդկանց և փորձագետների կարծիքները: Ինչպես Էլսոնը նշում է գենդերային բյուջետավորումը նշանակում է միասնական ուսումնասիրման նպատակով գիտելիքների և տեղեկատվության համախմբում (Elson 2002 թ.):

Թիրախային խմբի մասին պատկերացում կազմելը.

- Որ՞ն է ծրագրի թիրախ հանդիսացող խմբի բնութագիրը: Հնարավո՞ր է արդյոք նկարագրել թիրախային խումբն ըստ սեռային, տարիքային, էթնիկ-ազգային, անաշխատունակության, քաղաքացիական կարգավիճակի և բնակման վայրի:
- Արդյո՞ք շահառուի բնութագիրը համապատասխանում է թիրախային խմբի բնութագրին:
- Եթե այն չի համապատասխանում, ապա ովքե՞ր չեն ներառված թիրախային խմբում:
- Ինչու՞ թիրախային խմբի որոշ անդամներ ներառված չեն ծրագրում:
- Թիրախային խմբի անդամների ո՞ր տոկոսն է ներառված թիրախային խմբում:

Բյուջետային հոդվածը

- Արդյո՞ք օգտագործվել է ծրագրի համար հատկացված ամբողջ գումարը: Եթե ոչ, ապա ո՞ր մասը չի ծախսվել:

- Արդյո՞ք հատկացված գումարը բավարար է թիրախային խմբի կարիքները բավարարելու համար (հաշվի առնելով ծրագրում թիրախային խմբի ընդգրկված անդամների տոկոսը):
- Արդյո՞ք հատկացված գումարը տարեց տարի աճում է թե՞ կրճատվում:
- Որո՞նք են հատկացված ֆինանսավորումը բնութագրող ցուցանիշներն ըստ մայր գումարի, ժամանակային սահմանափակումների, տարեկան ծավալի և այլն:
- Որո՞նք են բյուջեից բխող սահմանափակումները:
- Ոքվե՞ր են իրավասու որոշում կայացնում ֆինանսավորման օգտագործման ուղղությունների փոփոխության վերաբերյալ և ովքե՞ր կարող են ազդել այդ որոշումների վրա:

Քաղաքականության և գումարների հատկացման միջև համապատասխանությունը

- Ինչպիսի՞ նպատակով է հատկացվել ֆինանսավորումը:
- Ո՞ր թիրախների և ցուցանիշների միջոցով կարելի է գնահատել վերջնական արդյունքները:
- Որքանո՞վ է ծրագիրը հաշվի առնում գենդերային իրավահավասարության ոլորտում պետության կողմից տարվող քաղաքականությունը:
- Արդյո՞ք ծրագրի ներքո իրականացվում է գենդերային ազդեցության վերլուծություն:

- Արդյո՞ք առկա են ծրագրի գենդերային ազդեցությունը գնահատող համակարգերը:

Ծանոթություն

- Վերլուծության սկզբնական փուլում առաջացող կարևոր հարցն այն է, թե արդյո՞ք ծրագրի միջոցով հնարավոր եղավ նվազեցնել կամ վերացնել գենդերային անհավասարությունը կամ այն որևէ ազդեցություն չունեցավ:
- Այդ հարցերին տրված պատասխանները և կատարված վերլուծությունը արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում հետևյալ հարցերի շուրջ.
  - համակարգի վերլուծություն անցկացնելու հնարավորությունը,
  - տվյալների առկայությունը,
  - տվյալների ապախոշորացման աստիճանը,
  - ծախսային որոշումների և գենդերային իրավահավասարության քաղաքականության միջև փոխկապակցվածությունը,
- Վերլուծությունը նաև թույլ է տալիս որոշել.
  - ինչպիսի քայլեր պետք է կատարել ուսուցման և վերապատրաստման հարցերում վերլուծական կարողությունները բարելավելու համար,
  - ինչպես կարելի է խորացնել և համակարգել վերլուծությունը:

2003 թ. Անդալուզիայում ընդունվել է օրենք, ըստ որի գենդերային ազդեցության գնահատումը կատարվում է բոլոր օրենքներում և այլ իրավական ակտերում: Ինչ վերաբերում է Ինքնավար համայնքի բյուջեին, օրենսդրությունը թույլ է տալիս Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կից կազմել նոր Հանձնաժողով, որը Անդալուզիայի կանանց ինստիտուտի հետ համատեղ կիրականացնի բյուջեի նախագծի գնահատում: Հանձնաժողովը «նպաստում և խթանում է տարբեր նախարարություններում գենդերային հեռանկարով բյուջետային նախագծերի մշակմանը և Junta de Andalucia-այի տարբեր նախարարություններում, կազմակերպություններում և գործակալություններում գենդերային ստուգումների անցկացմանը» (Հոդված 139, Ակտ 18/2003 թ.)

Բյուջեները գենդերային իրավահավասարության հետ փոխկապակցելու շրջանակ (Էլսոն, 2002 թ.)

Գենդերային բյուջետավորումը սովորաբար առանձին պահպանվող երկու ոլորտների՝ գենդերային իրավահավասարության և պետական ֆինանսների ու պետական հոդվածի ծրագրերի միասնականացում է:

ԽՆԴԻՐ	ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՆ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏՎՅԱԼՆԵՐ/ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
Ներդրում (ստացված և ծախսված ֆինանսավորումն ըստ գործառնական կամ ծրագրային դասակարգման)	• Արդյո՞ք ներդրումը բավարար է գենդերային իրավահավասարության և այլ նպատակներին հասնելու համար:	• Ըստ սեռերի ապախոշորացված տվյալներ

Գործողություններ (պլանավորված և մատուցված ծառայություններ, օր. առողջապահական ծառայություններ, ձեռնարկություններին օժանդակություն, սոցիալական տրանսֆերտներ և այլն)	• Արդյո՞ք նախատեսված գործողությունները հավասար չափով են նպաստում կանանց և տղամարդկանց շահերին: • Արդյո՞ք գործոզությունները բավարար են գենդերային իրավահավասարության և այլ նպատակներին հասնելու համար:	• Արդյունքի և ներդրման նպատակները և ցուցանիշները կարող են բարելավման կարիք զգալ, որը բավարարելու համար անհրաժեշտ է տվյալների նոր աղբյուրներ գտնել: • Գենդերային հարաբերությունների պատկերացում: • Պատկերացում կազմելու ուղիներից մեկը պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունն է: • Եթե այդ հարցի պատասխանը ՈՉ-է, ապա անհրաժեշտ են փոփոխություններ բոլոր չորս բնագավառներում, որոնք թույլ կտան վերացնել հայտնաբերված գենդերային ճեղքվածքները:
Արդյունքներ (պլանավորված գործողությունների և մատուցված ծառայությունների արդյունք, օր.՝ բուժված հիվանդներ, աջակցություն ստացած ձեռնարկություններ, եկամտի աճ և այլն)	• Արդյո՞ք արդյունքները հավասար ենթաշխվել կանանց և տղամարդկանց միջև: • Արդյո՞ք արդյունքները թույլ են տալիս հասնել գենդերային իրավահավասարությանը և այլ նպատակներին:	
Ազդեցություն (պլանավորված և կոնկրետ նվաճումներն ավելի լայն նպատակների համեմատ, օր.՝առողջ մարդիկ, մրցունակ ձեռնարկություններ, աղքատության կրճատում:	• Արդյո՞ք արդյունքները թույլ են տալիս հասնել գենդերային իրավահավասարության և այլ նպատակներին:	

2.3.4 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Նման մակարդակի վերլուծություն անցկացնելու արդյունքում կարելի է ստանալ միայն սահմանափակ պատկերացում ծախսային ծրագրի գենդերային ազդեցության մասին: Հավանական է, որ Քաղաքականությունը ծախսերի հետ համապատասխանեցում բաժնում ներկայացված հարցերի պատասխանները ավելի շատ նոր հարցեր կառաջացնեն քան պատասխաններ կտան: Գենդերային փորձագիտության զարգացումը պետք է դառնա ռազմավարությունների մշակման և ծրագրերի պլանավորման անբաժանելի մասը: Իրականում այն պետք է դառնա հենանիշների և նպատակների սահմանման, արդյունքների գնահատման և ծրագրերը նոր նպատակների հետ համապատասխանեցման շարունակական գործընթաց:

Գենդերային փորձագիտություն զարգացնելու համար կատարվում են հետևյալ առաջարկները.

- Ընտրել այն ծախսային ոլորտը, որտեղ գենդերային արդյունքը առավել մեծ կարող է լինել
- Ինչպիսի՞ պետական քաղաքականություն է անցկացվում այդ ոլորտում: Արդյո՞ք այդ քաղաքականության ներքո ձևավորված են նպատակներ, թիրախներ և ցուցանիշներ

- Ինչպե՞ս կարելի է գենդերային իրավահավասարության գծով պետական քաղաքականությունը ներառել կոնկրետ ծրագրում կամ ծախսային ոլորտում
- Ինչպիսի՞ տեղեկատվություն (պաշտոնական աղբյուրներից և անկախ հետազոտություններից) և փորձագիտություն (հասարակական կազմակերպություններից, գենդերային հարցերով փորձագետներից և հետազոտողներից) է առկա
- Ինչպիսի՞ տեղեկատվություն կա ծառայություններից օգտվողների տեսակետների վերաբերյալ: Արդյո՞ք ծառայություններից օգտվողների բավարարվածության աստիճանը որոշելու համար անց է կացվել շահառուների գնահատում: (տես՝ Բրիտանական Համագործակցության Երկրների Քարտուղարության գործիքներ բաժինը):

2.3.5 ԳԵՆԴԵՐԻ ՈՐՊԵՍ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի տարբեր երկրներում գենդերային բյուջետավորման գծով իրականացվող միջոցառումները հիմնված են տեղական պայմաններին համապատասխանեցված գենդերային

իրավահավասարության ռազմավարության արմատավորումն ապահովող մեթոդաբանության վրա: Ռազմավարության նպատակն է գենդերը, որպես վերլուծական կատեգորիա ներառել բյուջետային ծրագրերի վերլուծություններում: Ստորև ամփոփված են այդ ոլորտում կրառվող մոտեցումները:

Այդ մեթոդաբանությունն ենթադրում է շարունակական և առանց ընդհատումների իրականացվող գործընթաց, որը ծավալվում է բյուջեի տարեկան պլանավորման կանոնավոր աշխատանքներին զուգահեռ, կամ որպես վերջինիս անբաժանելի մասը: Արդյունքում, յուրաքանչյուր տարվա ընթացքում էլ ավելի են զարգանում փորձն ու գիտելիքները:

Ինչպես արդեն նշվել էր, այդ գործընթացը կոորդինացվում է շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից կազմված կոորդինացիոն խմբի կողմից:

Քայլ 1

Ուսումնասիրել դիտարկվող բյուջետային հոդվածի/ծրագրի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, այդ թվում՝

- Ծախսային նպատակները
- Արդյունքների մասին տեղեկությունը
- Ժամանակի ընթացքում ծախսային գումարի փոփոխությունը և դրա հետևանքները

- Համապատասխանությունը նույն ոլորտին/գերատեսչությանն առնչվող այլ նմանատիպ ծրագրերին:

Քայլ 2

Հավաքել թիրախային խմբի գծով բոլոր առկա տեղեկատվությունը, հատկապես գենդերային խնդիրների հետ առնչվող: Տեղեկատվության աղբյուրների թվում են.

- Տվյալներ, որոնք ներկայացվել են այն ծառայությունների կողմից, որոնց բյուջեները վերլուծվում են (ըստ սեռերի ապախոշորացված տվյալներ)
- Ազգային վիճակագրության ծառայությունից ստացվող վիճակագրական տվյալներ
- Անկախ փորձագետների և հասարակական կազմակերպությունների զեկույցներ, որոնք վերաբերում են թիրախային խմբի գենդերային հարցերին
- Բյուջետային հոդվածի/ծրագրի ազդեցությունը չվարձատրվող աշխատանքի վրա
- Շահառուների գնահատումները
- Պաշտոնական և/կամ անկախ փորձագետների կողմից կազմված և ծրագրի կամ ծրագրերի հետ առնչվող հաշվետվություններ
- Խորհրդատվություն գենդերային հարցերով հասարակական գործիչների հետ, ընդ որում խորհրդակցական մեխանիզմները կազմվում են ծրագրի պլանավորման ժամանակ:

Քայլ 3

Որոշել գենդերային իրավահավասարության գծով ծրագրի նպատակները, հաշվի առնելով.

- նախկին ծրագրում գենդերային իրավահավասարության գծով կոնկրետ հետապնդվող նպատակները, դրանց առկայության դեպքում
- այդ ոլորտում ազգային գենդերային իրավահավասարության նպատակները
- ոլորտին բնորոշ գենդերային հետազոտություն և վերլուծություն
- քայլ 2-ի արդյունքում ձեռք բերված գիտելիքը:

Քայլ 4

Գենդերային իրավահավասարության հասնելու նպատակով մշակել միջոցների հատկացման ռազմավարություն: Հիմնական ուշադրությունն այստեղ պետք է դարձնել համակարգում, գործընթացներում, անձնակազմի հաշվետվական մեխանիզմներում, որոշումների կայացման կառուցվածքում և այլ հարցերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վրա, այլ խոսքով գենդերային իրավահավասարության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջոցների հատկացման հետ կապված ամբողջ ենթակառույցի վրա:

- Գենդերային բյուջետավորման կոորդինացիոն հանձնաժողովի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ մեխանիզմները

- Անձնակազմի ուսուցումը գենդերային հարցերով
- Գենդերային տվյալների համակարգի բարելավումը, որը ներառում է բայց չի սահմանափակվում ըստ սեռերի ապախոշորացված տվյալներով
- Գենդերային հարցերում առաջացող մարտահրավերների լուծմանը միտված և բյուջեի կողմից աջակցվող միջոցառումները
- Գենդերային նպատակների փոխկապակցումը բյուջեի/ բյուջետային հոդվածի/ծրագրի այլ նպատակների հետ, այդ երկու խմբերի միջև բախումները բացառելու համար
- Գենդերային իրավահավասարության հարցը կառավարության բարձրագույն ատյանին հասցնելու ռազմավարական նպատակի կարգավիճակի մասին իրազեկվելու համար արդյունքների և գիտելիքների փոխանակման մեխանիզմները:

Քայլ 5

Սահմանել գենդերային ցուցանիշներ: Դրանց որակը որոշ չափով կապված կլինի այդ ոլորտում գենդերային ցուցանիշներով նախկին պրակտիկայից: Ինչպես նշված է այս բաժնի վերևում, գիտելիքի կատարելագործմանը և թիրախների նվաճմանը զուգահեռ կբարելավվի նաև գենդերային ցուցանիշների մշակումը:

- Հնարավորության դեպքում մշակել կոնկրետ ոլորտային և ծրագրային ցուցանիշներ

- Դիտարկել ինչպես որակական, այնպես էլ քանակական ցուցանիշները
- Ռազմավարական մոտեցմանը զուգահեռ գործընթացի յուրաքանչյուր փուլի համար սահմանել կատարողական ցուցանիշներ (Տես՝ Էլսոնի Գործառնության շրջանակը և Շարպի Անմիջական և վերջնական արդյունքների ազդեցության շրջանակը)

Գենդերային կապ
Անդալուզիայում իրականացված G+ Ծրագրի շրջանակում մշակվեց դասակարգման հատուկ համակարգ բյուջետային ծախսային հոդվածների և գենդերի միջև կապը որոշելու համար: Հետապնդվում էր գենդերային իրավահավասարության վրա առավել մեծ դրական ազդցություն ունեցող ծրագրերի բացահայտման և դրանց ուղությամբ աշխատանք տանելու նպատակը:

Քայլ 6

Կազմել մոնիտորինգի և գնահատման համար գործընթացներ: Կարևոր է, որպեսզի գենդերային բյուջետավորման ռազմավարության արմատավորման գործընթացը բազմակողմանի դիտարկվի և գնահատվի և դրա հիման վրա ստացված տեղեկատվությունը օգտագործվի գործընթացում: Ուշադրություն պետք է դարձնել հետևյալ հարցերի վրա.

- Արդյո՞ք բյուջետային հատկացումների ներքո կատարված փոփոխությունները հանգեցրեցին գենդերային իրավահավասարության տեսակետից ավելի լավ արդյունքների:

- Արդյո՞ք անհրաժեշտ են լրացուցիչ փոփոխություններ գենդերային իրավահավասարության գծով արդյունքների բարելավման համար:
- Կարիք կա՞ արդյոք կազմել և իրականացնել հատուկ միջոցառումների ծրագիր յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ բնակչության մի մասը գտնվում է անհավասար պայմաններում:
- Բյուջետային ֆինանսավորման ներքո փոփոխություններ կատարելու համար կարիք կա՞ արդյոք դիմելու գերագույն ատյաններին:
- Ինչպե՞ս կարող է ընդլայնվել գենդերային տնտեսագիտական վերլուծությունը գենդերային իրավահավասարության գծով արդյունքները բարելավելու համար:
- Ինչպիսի՞ փոփոխություններ են անհրաժեշտ կառուցվածքում գենդերային բյուջետավորմանը ռազմավարական բնույթ հաղորդելու համար:
- Արդյո՞ք անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ և ուսուցում:

Հնարավորությունների վրա հիմնված մոտեցում
Գենդերային բյուջետավորման նկատմամբ հնարավորությունների վրա հիմնած մոտեցումը կիրառվում է բավականին վերջերս, հիմնականում Իտալիայի մի շարք շրջաններում, մարզերում և քաղաքներում: Այն իրենից ներկայացնում է գաղափարական շրջանակ, որի միջոցով գնահատվում է թե որքանո՞վ է կառավարությունը նպաստում մարդկանց բարեկեցությանը: Ուշադրությունը սևեռվում է ոչ թե պետական ծառայությունների, այլ մարդկային բարեկեցության վրա,

այսինքն վերջնական արդյունքի, այլ ոչ թե ներդրման: Դրա հիման վրա վերլուծության շրջանակի ձևակերպման սկզբնական փուլում սահմանվում է մարդկային բարեկեցության աստիճանը կենցաղային առօրյայի բոլոր դրսևորումներում: Նման մոտեցման առավելություններից մեկը կայանում է նրանում, որ պետական մարմինները հնարավորություն են ստանում իրենց աշխատանքը ուղղել դեպի մարդկային բարեկեցությունը, այլ ոչ թե բյուջետային ներդրումները և արդյունքները, այլ խոսքով մարդկային իմաստավորում հաղորդել աշխատանքին: Նման մոտեցման տարբերությունը գենդերային բյուջետավորման այլ մոտեցումներից կայանում է նրանում, որ «գենդերային իրավահավասարության նպատակով պետական միջոցների ծախսումից» ուշադրությունը հղվում է դեպի «զարգացման այն աստիճանի, որին կարող են հասնել կանայք այդ միջոցների հատկացման արդյունքում» (Addabbo, 2004 թ.):

Նման մոտեցմամբ պետական ծառայությունների գենդերային աուդիտ անցկացնելու համար անհրաժեշտ է կառուցել տարրացանց, որի ներքո պետական քաղաքականությունը և ծառայությունները հպանցվում են գենդերային հզորացման կամ հնարավորությունների հետ: Այն նախատեսում է պետական վարչարարության ներքո օգտագործվող հասկացությունների ձևակերպումը որպես հնարավորությունների վրա հիմնված գաղափարներ: Այստեղ առանցքային դեր ունեն երկու հասկացությունները՝ հնարավորությունը և գործառնությունը: Դրանցից յուրաքանչյուրը լիցք է հաղորդում մյուսին: Գործառնությունը կապված է իրականացման հետ, այսինքն այն քայլերի, որոնք ձեռնարկվում են մարդկանց կողմից պատկերացվող բարեկեցությունն ապահովելու համար: Հնարավորությունը ենթադրում է գործառնության իրականացման նպատակով միջոցների օգտագործումը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է թե ինչպես է այդ տարրացանցը կիրառվել Իտալիայի Մոդենայի շրջանի բյուջեում: Տարրացանցի ընկալումը և դրա հիման վրա մարզպետարանի 9 վարչությունների աշխատանքի համապատասխանեցումը հանդիսանում է պետական մարմնի կողմից սկզբունքորեն նոր մոտեցման դրսևորվման ազդանշան: Կարևոր է նշել, որ տարրացանցը հնարավորություն է ընձեռում վարչություններին միմյանց միջև կոորդինացնել այդ ուղղությամբ կատարվող աշխատանքը, որը նույնպես ապացուցում է, որ այս մոտեցումը հաշվի է առնում յուրաքանչյուր հնարավորության բազմակողմանիությունը և «տարբեր վարչությունների ներդրումը, համագործակցությունն ու աշխատանքային պարտականությունների համատեղումը: Այսպես, կրթված լինելն, օրինակ, ենթադրում է ավտոտրանսպորտ, առողջություն, սնունդ, հավասար հնարավորություններ, սպորտ և այլն, ինչպես նաև դպրոցներ» (Addabbo, 2004 թ.):

Պետական միջոցների հատկացման տեսակետից դիտարկվող հնարավորությունների ցանկը լավագույնս կարող է կազմվել տարբեր պետական կառույցներ հետ համագործակցության հիման վրա՝ օգտվելով տվյալների և տեղեկատվության զանազան աղբյուրներից և պետական պաշտոնյաների գիտելիքներից, ինչպես նաև համայնքների հետ խորհրդակցելուց: Նման մոտեցման ներուժը նրա ամբողջական բնույթն է, ինչես նաև այն, որ այն միտված է համայնքային բարեկեցության տեսլականի իրականացմանը և, երկարաժամկետ ժամանակահատվածում հնարավորություններից օգտվելու անհնարինության դեպքում, ծախսային փոփոխություններ կատարելու ունակության դիտարկմանը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Դասեր / Նախարարություններ	Կրթություն և ուսուցում առանձին	Ապրել առողջ և ակտիվ միջավայրում	Զգաստ տեղաշարժվել կամ տեղաշարժվելու հնարավորություն ունենալ	Ապահով գործել	Միջոցներից օգտվելու կամ դրանց հասանելիություն ունենալ	Աղաց կամ ձմրան	Խնայել կենսունակի վերջում	Հանգստի հնարավորություն ունենալ	Լինել տեղեկացված
Կրթության և ուսուցման									
Շրջակա միջավայրի և քաղաքացիական պաշտպանության									
Ճանապարհների տրանսպորտի և շինարարության									
Սննդի և գյուղատնտեսության									
Տնտեսականքաղաքականության մարդկային ռեսուրսների և հավասար հնարավորությունների									
Զբոսաշրջության, մշակույթի և սպորտի									
Քաղաքաշինության և տարածքային զարգացման									
Աշխատանքի, սոցիալական ապահովության, հասարակականկազմակերպությունների և վտարանդիների									
Բյուջեի, վարչական, ԵՄ-ի և ինստիտուցիոնալ հարցերի									

Բրիտանական Համագործակցության Երկրների Քարտուղարության գործիքները

Կազմում ներառված են 7 գործիքներ, որոնք նշվել են պրոֆեսոր Դիան Էլիսոնի կողմից 1999 թ. կայացած Բրիտանական Համագործակցության Երկրների Քարտուղարության հանդիպման ժամանակ.

1. *Պետական ծառայությունների և բյուջետային առաջնահերթ ծրագրերի շահառուների գնահատում ըստ սեռային ապահովորացման տվյալների:* Գնահատումը կատարվում է հարցումների, թիրախային խմբերի հետ զրույցների, կարծիքների ուսումնասիրությունների և այլ միջոցառումների ընթացքում ստացված տեղեկատվության հիման վրա, երբ իրական կամ հնարավոր շահառուին հարցնում են՝ որքանով են պետական ծրագրերը և ռազմավարական ուղղությունները համապատասխանում իր առաջնահերթություններին և կարիքներին:

2. *Պետական ծախսերի կառուցվածքի գենդերային ապահովորացմամբ վերլուծություն:* Սա քանակական գործիք է, որի միջոցով հաշվարկվում է պետական ծառայությունների ծախսի միավորը և դրանց բաշխվածությունը կանանց և տղամարդկանց միջև, ելնելով իրականում ստացած ծառայություններից: Կատարվում է յուրաքանչյուր ծառայության

ծախսի միավորի հաշվարկ, ինչպես նաև որոշվում է թե քանի՞ կին և քանի տղամարդ են օգտվել այդ ծառայությունից: Խոշորացված մակարդակի համար կարող են օգտագործվել տնային տնտեսությունների հարցումների արդյունքները, իսկ առավել ստույգ պատկեր ստանալու համար վերլուծությունը կատարվում է առանձին ծրագրի շրջանակում:

3. *Քաղաքականության գնահատում գենդերային իրազեկվածության տեսակետից:* Այն կիրառվում է բյուջետային հատկացումների հիմքը հանդիսացող ռազմավարական ուղղությունների ներքո, բացահայտելով դրանց հնարավոր ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: Հարցականի տակ է դրվում այն կարծիքը, որ բյուջետային քաղաքականությունը կրում է գենդերային տեսակետից չեզոք բնույթ և փոխարենը հարց է բարձրացվում «որքանո՞վ բյուջետային ռազմավարության ուղիները և համապատասխան հատկացումները կարող են նվազեցնել կամ ավելացնել գենդերային անհավասարությունը»:

4. *Գենդերային հարցերով բյուջետային հաշվետվություն*: Ցույց է տալիս ընդհանուր և ըստ նախարարությունների իրականացված բյուջետային ծախսերի միտվածությունը գենդերային անհավասարության խնդիրների լուծմանը: Ծրագրավորված ծախսերն ապահովորացվում են մի շարք գենդերային ուղղ-

վածությամբ դասերի: Սովորաբար բյուջետային ծախսերը խմբավորվում են ըստ նախարարությունների և գործառնային բաժինների, ընթացիկ և կապիտալ ծախսերի և ծախսային հոդվածների, օրինակ՝ անձնակազմ, սարքեր և այլն: Գենդերային ուղղվածությամբ դասերի թվում են. անհավասարության վերացման նպատակով միայն կանանց կամ տղամարդկանց հատկացվող ֆինանսավորման տոկոսը, կանանց գենդերային անհավասարության նվազեցման նպատակով առաջնային կարևորություն ունեցող եկամտային տրանսֆերտների ֆինանսավորմանն ուղղվող ծախսերի տոկոսը, գործարարության զարգացման գծով նախատեսված ծախսերի տոկոսը, ազգային գենդերային մարմիններին հատկացվող միջոցների տոկոսը և այլն:

5. *Օգտագործված ժամանակի գծով գենդերային ապահովորագմամբ բյուջետային վերլուծություն:* Այս գործիքը թույլ է տալիս բացահայտել ազգային բյուջեի և չվարձատրվող աշխատանքի միջև հարաբերակցությունը, որը հաճախ անվանվում է խնամքի տնտեսություն: Նպատակն է գտնել չվարձատրվող աշխատանքը չափելու մեթոդ, ցույց տալ բաշխվածությունը կանանց և տղամարդկանց միջև և մշակել բյուջետային քաղաքականություն, որը հաշվի կառնի չվարձատրվող աշխատանքի դերը տնտեսությունում: Կանայք կրում են չվարձատրվող աշխատանքների գծով բեռի

մեծ մասը, որի պատճառով քիչ ժամանակ ունեն այլ գործունեությամբ զբաղվելու, այդ թվում աշխատուժի շուկայի հնարավորություններից օգտվելու համար: (Տես BASS-ի կողմից և Բազել քաղաքի կանտոնում կատարված ուսումնասիրությունները):

6. *Գենդերային ուղղվածությամբ միջնաժամկետ տնտեսական քաղաքականության շրջանակ:* Ներկա միջնաժամկետ մակրոտնտեսական քաղաքականության շրջանակները ձևավորվում են զանազան տնտեսագիտական մոդելների հիման վրա, որոնցից ոչ մեկը հաշվի չի առնում գենդերը: Գենդերի ընդգրկումն այդ ծրագրերում կարող է իրականացվել մի շարք ապահովորագված փոփոխական մեծությունների միջոցով կամ ստեղծելով նոր գենդերային դյուրազգաց մոդելներ:

7. *Գենդերային ապահովորագմամբ պետական եկամուտների կառուցվածքի վերլուծություն:* Այն դիտարկում է հարկման ուղղակի և անուղղակի ձևերը, որը թույլ է տալիս հաշվարկել թե որքան հարկեր են վճարվում անհատների կամ տնային տնտեսությունների տարբեր խմբերի կողմից:

Ինտերնետային կայքեր.
http://www.thecommonwealth.org/gender
http://www.thecommonwealth.org

ԲԱԺԻՆ 3

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՎ

Այս բաժնում դիտարկվում է վերջին տասնամյակում Եվրոպայի տարբեր երկրներում իրականացված գենդերային բյուջետավորման գծով զանազան աշխատանքը: Ներկայացվող օրինակները բաշխված են ըստ հետևյալ դասերի.

- Կենտրոնական կառավարություն
- Ոլորտային/գերատեսչական մակարդակ
- Շրջանային/տեղական կառավարություն
- Ծրագրային մակարդակ

3.1 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գենդերային հեռանկարի արմատավորումը ազգային բյուջեներում անկասկած հանդիսանում է գենդերային բյուջետավորման նպատակը: Այն նախատեսում է պետական եկամուտների ավելացում և պետական միջոցների տրամադրում գենդերային իրավահավասարության նպատակներին համապատասխան ձևով:

Այդ մակարդակում կայացվում են կարևորագույն որոշումներ բյուջետային քաղաքականության վերաբերյալ, որոնք թելադրում են բյուջետային միջոցների բաշխումը մի շարք միմյանց հետ մրցակցող գերակայությունների միջև: Երբ հերթը հասնում է գենդերային իրավահավասարության ապահովմանը միտված բյուջետային որոշումներին, նախապատվությունը տրվում է այնպիսի հարցերին, ինչպիսին են ընտանեկան հարկային արտոնությունները, երեխաների խնամքի համար հատկացվող միջոցները, սոցիալական նպաստների ավելացումը, զբաղվածության և աշխատուժի շուկայի գծով ծրագրերը, կանանց և տղամարդկանց առողջապահության գծով լրացուցիչ ծրագրերը և այլն: Հաճախ այդ ուղղություններով նախատեսվող բոլոր միջոցները համախմբվում են մեկ զամբյուղում և դրանց գծով ընդհանուր պատասխանատվությունը դրվում է կառավարության որևէ գերատեսչության վրա:

Այդ մակարդակում գենդերային բյուջետավորում նախաձեռնելու հնարավորությունները հետևյալն են.

- Գենդերային բյուջետավորումը դնել օրենսդրական հիմքերի վրա

- Փոխկապակցել գենդերային բյուջետավորումը բյուջետային բարեփոխման գործընթացի հետ
- Անցկացնել ծախսային վերլուծություններ
- Պատրաստել կանանց բյուջետային հաշվետվության:

3.1.1 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՕՐԵՆՍԴԱՐԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Գենդերային բյուջետավորումը օրենսդրական հիմքերի վրա դնելը իրականացվում է կենտրոնական կառավարության մակարդակով: Նման քայլի իրականացման նպատակահարմարությունը և այն կատարելուց հետո կիրառման արդյունավետությունը կախված է յուրաքանչյուր երկրի օրենսդրության առանձնահատկություններից: Նման առանձնահատկությունների թվում են.

- Գործառնական շրջանակի տարրերի առկայություն, որը սահմանում է հսկողության գծով պատասխանատվությունը և հաշվետվականության ու մոնիտորինգի պայմանները
- Տվյալների հավաքագրման և կառավարման պայմանները պետք է համապատասխանեցվեն գենդերային իրավահավասարության ռազմավարության հետ

- Եկամուտներ առաջացնող ծրագրերի դիտարկումը գենդերային տեսակետից
- Արդյունքների մասին զեկույցը տարեկան հրապարակելու և պաշտոնական բյուջետային փաստաթղթերում ընդգրկելու պահանջը:

Բյուջեների գենդերային դյուրազգացությունն ապահովելու պահանջը ամրագրված է Ավստրիայի, Բելգիայի և Իսպանիայի օրենսդրություններում: Ստորև ներկայացվում է այդ երկրների գենդերային օրենսդրության համառոտ նկարագրությունը:

Ավստրիա

Գենդերային իրավահավասարությունը պատշաճ կերպով արտացոլված է Ավստրիայի օրենսդրությունում: Դաշնային Սահմանադրության Հոդված 7-ի համաձայն դաշնային կառավարությունը, շրջանները և տեղական մարմինները պարտավոր են ապահովել կանանց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունքը: Ավստրիայում ազգային, շրջանային և տեղական մակարդակով իրականացվել են գենդերային բյուջետավորման գծով մի շարք միջոցառումներ[2], որոնք միասնական պատկեր են ստեղծում այդ ոլորտի մասին:

[2] Լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ. www.imag-gendermainstreaming.at

Դաշնային Սահմանադրությունում կատարված վերջին փոփոխության համաձայն (հոդ. 13(3), հունվար 2008 թ.) պետական գերատեսչությունները պարտավոր են բյուջեի կառավարման բոլոր փուլերում ապահովել գենդերային իրավահավասարությունը: Այդ հոդվածի պահանջներին համապատասխան 2009 թ. դաշնային բյուջեն ներառելու է գենդերային բաղադրիչը: Ավստրիայի դաշնային ֆինանսների նախարարության ներկայացուցիչ դր. Էլֆրիդե Ֆրիցը նշում է «ի դեմս Դաշնային Սահմանադրության ներկայումս մենք ունենք գենդերային բյուջետավորման շատ լավ օրենսդրական բազա, սակայն իրականացումը պահանջում է տարբեր ոլորտներում գործող փորձագետների քաղաքական կամքը, ընկալումը և համագործակցությունը»:

Կարևոր է նշել, որ գենդերային բյուջետավորում սահմանող օրենսդրությունն Ավստրիայում ընդունվել է բյուջեի մասին օրենքի բարեփոխման ներքո: Կատարողական արդյունքի վրա հիմնված բյուջետավորման շրջանակում գենդերային իրավահավասարության նպատակը կայանում է պետական ծառայությունների ոլորտում պետական միջոցների կառավարման թափանցիկության, արդյունավետության և հաշվետվականության ապահովումը: Դա նշանակում է, որ գենդերային իրավահավասարությունը դրվում է «նույն իրավական մակարդակի վրա, ինչ որ մակրոտնտեսական հավասարակշռությունը և ֆինանսական կայունությունը» (Klatzer, 2008 թ.): Գենդերային իրավահավասարության գծով կատարողական արդյունքների վրա հիմնված բյուջետավորման համակարգը գործելու է 2013 թվականից սկսած:

Բելգիա

2001 թ., Եվրոպական միության նախագահողը հանդիսանալու ժամանակաշրջանում, Բելգիան ՏՀԶԿ-ի, ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի և Հյուսիսային երկրների նախարարների խորհրդի հետ համատեղ կազմակերպել էր «Տնտեսական և ֆինանսական կառավարման հզորացում. դեպի գենդերային հարցերին արձագանքող բյուջետավորում» վեհաժողովը: Վեհաժողովի անցկացման արդյունքում Եվրոպայի տարբեր երկրներում, այդ թվում Բելգիայում, իրականացվեցին գենդերային բյուջետավորման գծով զանազան ծրագրեր և միջոցառումներ: Բելգիայում կատարված ուսումնասիրության նպատակն էր դիտարկել Բելգիայի դաշնային կառավարության ծառայություններում գենդերային բյուջետավորման կիրառելիությունը:

2007 թ. Բելգիայում ընդունվեց գենդերային իրավահավասարության ռազմավարության մասին օրենքը, որը հիմք հանդիսացավ համընդհանուր գենդերային բյուջետավորում իրա-

կանացնելու համար: Օրենքով սահմանվեց, որ կառավարության բոլոր ծառայությունները պետք է մանրամասնորեն ներկայացնեն գենդերային իրավահավասարության ապահովման գծով իրենց միջոցառումները և ծրագրավորված ծախսերը: Նման գենդերային հավելվածները պետք է կցվեն բյուջետային վարչությանը տրամադրվող բյուջետային նախագծերին, որն իր հերթին ամփոփում և ներկայացնում է դրանք դաշնային բյուջեի գենդերային հավելվածի տեսքով:

Օրենքով նախատեսվում է, որ յուրաքանչյուր նորընտիր կառավարություն իր պաշտոնավարման ժամկետի սկզբում պետք է ներակայացնի գենդերային իրավահավասարության գծով ռազմավարական նպատակների և առաջնահերթ միջոցառումների ծրագիրը: Այն նաև պարտավորեցնում է կառավարության գերատեսչություններին պետական գնումների պայմանագրեր շնորհելիս հիմնվել գենդերային ռազմավարության մոտեցումների վրա:

2009 թ. բյուջետային ուղերձում նշվում է գենդերային համակարգի ձևավորման և այդ ուղղությամբ կառավարության կողմից ստանձնած պարտավորության մասին և, որպես այդ ուղղությամբ առաջին քայլ, բյուջեի ներքո հատուկ միջոցներ են առանձնացվում գենդերային իրավահավասարության ծրագրերի իրականացման համար: Ուղերձում որպես

երկրորդ քայլ նշվում է ծրագրերի բյուջետային ազդեցության ուսումնասիրությունը: Ակնկալվում է, որ 2009 թ. բոլոր պետական գերատեսչություններն կանցնեն ամբողջական գենդերային վերլուծության, որի արդյունքները կարտացոլվեն 2010 թ. բյուջետային ուղերձում:

Բելգիայում Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ինստիտուտին հանձնարարված է հետևել և նպաստել այդ օրենքի իրականացմանը: Վերջինիս աշխատանքը, որն արդեն իսկ զգալի թափ է առել, ներառում է դասընթացների կազմակերպում և անցկացում, ձեռնարկների և հարցաթերթիկների կազմում, ինչպես նաև գործիքների և մեթոդաբանության մշակում: Օրենքով նախատեսվում է նաև կարևոր կառավարման կառույցի՝ Միջգերատեսչական կոորդինացիոն խմբի ստեղծումը, որում ընդգրկվելու են բոլոր նախարարությունները ներկայացնող ավագ ղեկավարները: Ինստիտուտը նաև ներկայացված է այդ խմբում որպես Քարտուղարություն:

Տվյալների և ցուցանիշների հարցում օրենքը նախատեսում է բոլոր ոլորտների համար ըստ սեռի ապախոշորացված վիճակագրական տվյալների ամփոփում և գենդերային ցուցանիշների սահմանում: «Գենդերային թեսթ» անվանումը կրող հաշվետվության ձևաչափը և բովանդակությունը պետք է հաստատվի կառավարության կողմից:

Իսպանիա

Թեպետ գենդերային բյուջեների գծով Իսպանիայում գոյություն ունեն որոշակի օրենսդրական հիմքեր, այնուամենայնիվ դրանք դեռևս բավականաչափ զարգացած չեն: 2007 թ. մարտին գենդերային արդյունավետությանը միտված Օրենսդրական ակտով սահմանվում է, որ «կառավարությունը պետք է ակտիվորեն արմատավորի իրավահավասարության սկզբունքը օրենսդրության մշակման և հաստատման բոլոր բնագավառներում, պետական բյուջետային քաղաքականության ձևավորման գործընթացում և ողջ իր գործունեությունում»: 2007 թ. ապրիլին ընդունված 2008 թ. Ընդհանուր պետական բյուջեի գործընթացը կարգավորող հրամանի համաձայն Ծրագրերի վերլուծության հարցերով հանձնաժողովի գործառույթները ներառում են «գնդերային իրավահավասարության ոլորտում ծախսային ծրագրերի ազդեցության վերլուծություն»-ը: Սակայն այդ ամենն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է ամբողջական կարգավորող օրենսդրական դաշտի առկայություն:

Նման դաշտի առավել արդյունավետ տարրերից է 2005 թ. մարտին նախարարների խորհրդի կողմից ընդունված Գենդերային իրավահավասարության ծրագիրը (Հրաման. APU/526/2005): Այդ հրամանով նախատեսվող միջոցառումներից մեկը վերաբերում է հար-

կաբյուջետային ոլորտում գենդերային իրավահավասարության քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական և տեղեկատվական համակարգերի զարգացմանը: Վերջինիս ներքո սահմանվում են բյուջետային ծրագրերի գծով նոր, ըստ սեռի ապախոշորացված ցուցանիշներ, հարկերի և պետական տուրքերի ոլորտներում կիրառվող ինքնահայտարարագրման միասնական համակարգերում գենդերային բաղադրիչի կիրառում և, ամենակարևորը, ըստ սեռի ապախոշորացման ենթակա տվյալները որոշելիս վիճակագրական վերլուծության անցկացում:

Մինդեռ Իսպանիայի ներկա օրենսդրական դաշտն այդ ոլորտում դեռևս բավականաչափ կայացած չէ, տվյալների ներկայացման գծով առկա են կարևոր օրենսդրական հիմքեր, որոնք ներկայացվեցին վերևում: Կանանց ինստիտուտի առաջարկով Սոցիալական հարցերի նախարարության Վիճակագրական հանձնաժողովը մեծ աշխատանք իրականացրեց այդ ոլորտի առաջնահերթ խնդիրների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Կատարված աշխատանքի արդյունքների հիման վրա իրավահավասարության հարցերով Դիտորդը որոշում կայացրեց նոր Վիճակագրական խումբ ստեղծելու մասին, որի տեխնիկական առաջադրանքն է ըստ սեռի տվյալների

ապախոշորացումից բացի վիճակագրական գործընթացի կատարելագործման այլ հնարավոր ուղիները ուսումնասիրությունը: Դա դիտվում է որպես բավականին հեռանկարային նվաճում, որը հաշվի է առնում գենդերային չափանիշների պատշաճ արտացոլման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերի բարդությունը:

3.1.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒՄԸ

Ամբողջ աշխարհում կառավարությունները բարեփոխում են իրենց բյուջետային գործընթացները, գերադասելով կատարողական հիմքերի վրա բյուջետավորման սկզբունքը (Sharp, 2003 թ.): Համակարգերի և գործընթացների կատարելագործմանը և մշակված մոդելներում նոր տվյալների ընդգրկմանը զուգահեռ հնարավորություն է առաջանում նաև գենդերային խնդիրների ներառման համար: Ինչպես նշվել էր, Ավստրիայում գենդերային բյուջետավորումն արդեն իսկ արմատավորվում է նոր կատարողականի վրա հիմնված բյուջետավորման գործընթացում, որի գործնական կիրառումը նախատեսված է 2013 թվականից:

Մեկ այլ օրինակ է Մյունխեն քաղաքը, որտեղ 2006 թ. դիտարկվեց բյուջետային ծրագրավորման գործընթացում ծառայությունների գծով տվյալների արդյունավետ ներառման հնարավորությունը: Դա տեղի է ունենում Նոր պետական կառավարման բարեփոխման և քաղաքապետարանի նոր հաշվապահական համակարգի ստեղծման գծով տարվող աշխատանքի ներքո: Քաղաքային իշխանությունները պարտավորություն են ստանձնել ծրագրի սկզբից ի վեր որդեգրել գենդերային իրավահավասարության ռազմավարության և գենդերային բյուջետավորման ինտեգրացման մոտեցումը: Ներկայումս այդ ուղղությամբ իրականացվում են ուսուցողական դասընթացներ, որտեղ իրականացվում է թիրախային խմբերի վերլուծություն, վիճակագրական տվյալների և հարցումների արդյունքների գնահատում և մեկնաբանվում և կատարողական ցուցանիշների մշակումը: Գենդերային խնդիրները դիտարկվում են բազմանկյուն և համապարփակ ձևով:

«Բյուջետավորում հավասարության համար» աշխատանքում Ռոնդա Շարպը հետազոտում է գենդերային բյուջետավորման իրականացման հնարավորությունը կատարողական արդյունքների վրա հիմնված բյուջետավորման գործընթացում»:

Գենդերային բյուջետավորում անմիջական և վերջնական արդյունքի բյուջետավորման հիման վրա (Sharp 2003 թ.)

Թափանցիկության և արդյունավետության նկատառումներից ելնելով շատ ու շատ երկրներ ներկայումս անցնում են կատարողական արդյունքի հիման վրա բյուջետավորմանը: Ծախսային բյուջետավորման սկզբունքից հեռանալու այդ միտումը հանգեցրեց մի շարք նոր մոտեցումների, որոնց թվում են գործունեության, ծրագրային, անմիջական արդյունքի և վերջնական արդյունքի հիման վրա բյուջետավորումը: Ընդհանուր առմամբ այս մոտեցմամբ փորձ է արվում բյուջետային որոշումները փոխկապակցել կատարողական արդյունքի մասին տեղեկատվության հետ:
Ստորև բերվող գծապատկերում ներկայացված է անմիջական և վերջնական արդյունքի հիման վրա բյուջետավորման գործընթացի «3E» (economy, efficiency, effectiveness՝ տնտեսվարում, արդյունավետություն, էֆեկտիվություն) կատարողական ցուցանիշների կիրառումը:

- ներդրումը գնահատվում է ըստ տնտեսվարման գծով արդյունքների
- անմիջական արդյունքները գնահատվում են ըստ արդյունավետության
- վերջնական արդյունքների գնահատվում են ըստ էֆեկտիվության



Կատարողական չափանիշներ

«Բյուջետավորում հավասարության համար» աշխատանքում Ռոնդա Շարպը հետազոտում է գենդերային բյուջետավորման իրականացման հնարավորությունը կատարողական արդյունքների վրա հիմնված բյուջետավորման գործընթացում և առանձնացնում երեք առանցքային տարրերը:

- ներդրման, անմիջական և վերջնական արդյունքի ապախոշորացված ցուցանիշների կիրառում
- «հավասարություն» կատարողական ցուցանիշի՝ չորրորդ «E»-ի (equity) ավելացում նախորդ երեքին
- անմիջական և վերջնական արդյունքի վրա հիմնված ավանդական բյուջետավորման սուր քննադատություն և գենդերային իրավահավասարության գծով առաջընթացի որոշման նպատակով համապատասխան կատարողական ցուցանիշների ձևակերպում

Չորրորդ «E»-ի ավելացումը խնդիրներ է առաջացնում, քանի որ մնացած «3E»-ները չափվում են որպես գործակիցներ, այսինքն՝ ներդրման տնտեսվարումը նվազագույն ծախսի գործակիցն է, արդյունավետությունը՝ ներդրում/ արդյունք գործակիցը, իսկ էֆեկտիվությունն՝ անմիջական արդյունք/ վերջնական արդյունք գործակիցը: Այնուամենայնիվ Շարպը բյուջետային գործընթացի բոլոր երեք փուլերում հավասարության ցուցանիշների կիրառման կոնկրետ օրինակներ է բերում:

3.1.3 ԾԱԽՍԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծախսային հաշվարկը կարևոր գործիք է հանդիսանում բյուջեն կազմելու, ինչպես նաև բյուջետային հատկացումների բավարարությունը առանձին բյուջեի ծախսային հոդվածների նպատակներին որոշելու համար: Այդ գործիքը կարող է կիրառվել տարբեր ճանապարհներով: Օրինակ, եթե հայտնի է, որ բյուջեի կոնկրետ ծախսային հոդվածով սպասարկվել է X քանակի մարդ և բնակչության Y տոկոսի աճի դեպքում այդ ծառայության գծով ծախսն ավելացել է Z տոկոսով, ապա ծառայությունների մատուցումը շարունակելու համար անհրաժեշտ բյուջետային հատկացումների հաշվարկը բավականին պարզ վարժություն է:

Իրավահավասարության գնահատման համար ծախսային հաշվարկը պահանջում է ավելի բարդ վերլուծական շրջանակ: Այդպես, ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարելու, տղամարդկանց քաղծկեղի ախտորոշման գծով ծառայություններից օգտվելու կամ կրթության համընդհանուր հասանելիությունն ապահովելու գծով ծախսրի հաշվարկը պահանջում է ավելի լայնածավալ տեղեկատվության առկայություն: Նման օրինակների թվում են Հազարամյակի մարտահրավերների ծրագրի ներքո կատարված ՁԻԱՎ-ի դեմ պայքարի և տեղահանված բնակչության կարիքների բավարարման գծով կատարված ծախսային հաշվարկները:

Եվրոպայում նման ծախսային հաշվարկներ կատարվել են հասարակական խմբերի կողմից և դրանց արդյունքներն օգտագործվել են քարոզչական նպատակներով: Հաճախ բյուջեի նման ծախսային հաշվարկները կազմում են սոցիալական խնդիրներով զբաղվող կազմակերպությունների և հասարակության այլ խմբերի աշխատանքի կարևոր մասը: Տարբեր շահագրգիռ մասնակիցների կողմից օգտագործվող տեղեկատվության չափօրինակացումը և զուգակապումը բավականին բարդ խնդիր է: Նման հաշվարկների պրակտիկայի ներդրումը կարևորվում է կառավարության գերատեսչությունների աշխատանքի թափանցիկությունն ապահովելու տեսանկյունից:

3.1.4 ԿԱՆԱՆՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1980-90 թթ. Ավստրալիայի կառավարության կողմից կազմվող Կանանց բյուջետային հաշվետվությունները հանդիսանում են գենդերային ոլորտում ձեռնարկվող միջոցառումների առաջին օրինակները: Այնուհետև այդ մոդելը կիրառվել է նաև այլ երկրներում: Ֆրանսիայում այսպես կոչված «le Jaune budgntaire»-ը

որպես տարեկան բյուջեի հավելված առաջին անգամ կազմվել է 2000 թ., հանդիսանալով կանանց և տղամարդկանց վրա բյուջեի ազդեցության գծով վերլուծություն: Բելգիայի օրենսդրությամբ սահմանված «գենդերային ուղերձը» ըստ էության կանանց բյուջետային հաշվետվության մի տեսակ է: Նման հաշվետվությունների ձևաչափը, ներկայացված տվյալների մանրամասնեցման աստիճանը և աղբյուրները հաճախ զգալիորեն տարբերվում են միմյանցից:

Ոլորտային մակարդակով տեղեկատվություն տրամադրելը կառավարության պարտականությունն է: Այն առիթ է հանդիսանում կառավարության առկա կարողությունների ռազմավարական գույքագրման և լայնածավալ գենդերային ծրագրերի իրականացման համար: Աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստման աշխատանքներում կառավարության ենթակայության տակ գտնվող այլ ստորաբաժանումների ներգրավումը թույլ է տալիս ավելի հստակ պատկերացում կազմել անմիջական և վերջնական արդյունքների մասին, ինչպես նաև նպաստում է ծրագրերում լայն մասնակցությանը:

Բրիտանական Համագործակցության Երկրների Քարտուղարության գործիքակազմի Գործիք 4-ը (տես էջ 22-ը), ներկայացնում է նախարարությունների ծախսային հոդվածներում գենդերային նշանակություն ունեցող

ծրագրերը: Պեկինյան գործողությունների հարթակի ներքո ՄԱԿ-ին ներկայացվող հաշվետվություններում կանոնավոր թվարկվում են կանանց խնդիրների շուրջ կառավարությունների կողմից ձեռնարկված միջոցառումները: Այդ միջոցառումների ֆինանսավորման աղբյուրների բացահայտումը թույլ է տալիս նաև որոշել ֆինանսավորման կայունությունը և շարունակականությունը: ԵՄ-ի միջոցների հաշվին կանանց խնդիրների գծով ֆինանսավորվող մի շարք ծրագրեր ունեն ժամկետային սահմանափակում:

Նպատակը պետք է լինի վերլուծությունների որակի շարունակական բարելավումը, որի նախապայմաններից է շահառուների հետ փոխադարձ կապի պահպանումը, ինչպես նաև անկախ փորձագետների և հավասարության հարցերով զբաղվող հասարակական գործիչների կողմից կատարվող վերլուծությունը:

3.2 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՈԼՈՐՏԱՅԻՆ/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Ռազմավարության արմատավորում (Mainstreaming)

Գենդերային բյուջետավորման ռազմավարական արմատավորումը հիմնականում իրակա-

նացվում է հենց այս փուլում, որը նախորդում է բյուջետային քաղաքականության գծով որոշումների կայացման փուլը և հաջորդում ծախսային վերլուծության փուլին: Այս փուլը հանդիսանում է գենդերային բյուջետավորման աշխատանքի կիզակետը, որը և կանխորոշում է մյուս երկու փուլերի պատասխանատվության և լծակների մակարդակը: Այս փուլի արդյունքները կարող են ազդել Ֆինանսների նախարարության կողմից տարեկան բյուջեի վերաբերյալ կայացվող որոշումների վրա: Միևնույն ժամանակ նախարարությունները վերահսկում են իրենց առնթեր գերատեսչություններին, նախաձեռնելով, օժանդակելով և կոորդինացնելով գենդերային բյուջետավորման աշխատանքները:

Գենդերային բյուջետավորման աշխատանքի մեծ մասը կատարվում է ծրագրային կամ շրջանային և տեղական մարմինների մակարդակով, հաճախ նաև նախարարություններին առնթեր գերատեսչությունների կողմից: Փոփոխության համապարփակությունն ապահովելու համար փորձնական ծրագրերի արդյունքները և փորձը պետք է հասցվեն մինչև վերին ատյաններ: Նախարարությունների կողմից արդյունքների յուրացման և գործառնական կիրառման համար անհրաժեշտ կարողությունների բացակայության, համակարգի անկայունության և տեղեկատվությունը մինչ վերին ատյանները հասցնելու անհնարի-

նության դեպքում գենդերային բյուջետավորումը ծրագրային փուլից հետո այլևս չի զարգանա:

Այս փուլում կատարվող աշխատանքը պետք է դրվի կայուն, այսինքն՝ ռազմավարական հիմքերի վրա և միտված լինի նախարարության աշխատանքում գենդերային բաղադրիչի արմատավորման նպատակով կազմակերպչական փոփոխությունների իրականացմանը: Ինչպես մանրամասն ներկայացված է Բաժին 2-ում, դա նշանակում է համազգային գենդերային իրավահավասարության նպատակներն իրականացնելիս անդրադառնալ համակարգերին և գործընթացներին, դերակատարողներին և պատասխանատուներին, տվյալների թերություններին և պակասորդին, գենդերային գիտելիքների և կարողությունների ձևավորմանը, այսինքն՝ գենդերային բյուջետավորման գործընթացի ռազմավարական արմատավորման համար անհրաժեշտ համապարփակ ենթակառույցին:

Գենդերային աուդիտ

Լավ սկիզբ կարող է հանդիսանալ անձնակազմի և համակարգերի գենդերային պատրաստվածության ստուգումը: Նախարարությունների գենդերային աուդիտը թույլ է տալիս բացահայտել գենդերային աշխատանք և իրազեկման բարելավում պահանջող ոլորտները: Որպես սկզբնական աշխատանք կարե-

լի է նախարարություններում անցկացնել կառավարության գենդերային իրավահավասարության քաղաքականության արտացոլման աստիճանի ուսումնասիրություն.

- Արդյո՞ք նախարարությունների քաղաքականությունը արտահայտված է նպատակների տեսքով
- Արդյո՞ք նպատակների գծով թիրախները սահմանված են
- Արդյո՞ք իրականացվում է արդյունքների մոնիտորինգը,
- Արդյո՞ք նախարարություններն իրազեկված են քաղաքականության մասին
- Ինչպե՞ս է քաղականությունը հաղորդվում կառավարության ենթակառուցվածքային ստորաբաժանումներին
- Մեկ խոսքով, ինչպիսի՞ մեխանիզմներ են առկա ազգային գենդերային իրավահավասարության քաղաքականության իրականացման և համապատասխանեցման համար:

Ցանցային մոտեցում Սիենա քաղաքում

Դա Եվրոպայում փոքր համայնքների առաջին Գենդերային աուդիտի դեպքերից է (Իտալիայում օգտագործվում է Գենդերային աուդիտ հասկացությունը), որտեղ ներգրավվել են ութ համայնքներ (Իտալիայում համայնքը ամենափոքր վարչական միավորն է): Դա «կառավարության ներքո» իրականացվող միջոցառում էր, այսինքն այն իրականացվել է առանց քաղաքացիական հասարակության մասնակցության, երեք փորձագետների ղեկավարությամբ:

Ինչպես և նախորդ Գենդերային աուդիտի դեպքերում կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

1. գենդերային տեսակետից հավասարության և արդյունավետության գնահատման համար քանակական և որակական ցուցանիշների սահմանում,
2. ստացված ցուցանիշների համեմատում սահմանված հենանիշների հետ,
3. անբավարար կատարողական արդյունքի դեպքում համապատասխան ծախսի վերլուծություն:

Ուշագրավն այն է, որ կիրառվել է ցանցային մոտեցումը: Համայնքների փոխկապակցման շնորհիվ փորձ է արվել լուծել նախորդ Գենդերային ստուգումների ժամանակ ի հայտ եկած խնդիրները: Յուրաքանչյուր համայնքի մեկ ներկայացուցչից և երեք փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբը անց է կացրել հինգ աշխատանքային հանդիպումներ: Յուրաքանչյուր հանդիպում նվիրված է եղել կոնկրետ խնդրի, ընդ որում փորձագետների կողմից որպես խնդիրներ առաջարկվել են աշխատանքը և ընտանիքային համերաշխությունը (որպես երեխաների խնամքի և տարեցների խնամքի առանձին հարցեր), ինչպես նաև գենդերային խթանումը, իսկ համայնքների ներկայացուցիչների կողմից որպես խնդիր ավելացվել է ներգաղթը:

Յուրաքանչյուր հանդիպում սկսվել է փորձագետների կողմից տեղեկության ներկայացմամբ: Հանդիպումները չափազանց մեծ օգուտ տվեցին գենդերային հիմնախնդիրների նկատմամբ իրազեկվածության մակարդակի բարձրացման և գիտելիքային հենքի ամրացման հարցերում: Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ մասնակիցներին բաժանվեցին հարցաթերթիկներ տեղական մակարդակով մատուցվող ծառայությունների քանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ, որոնք մասնակիցները լրացրեցին և վերադարձրեցին հաջորդ հանդիպման ժամանակ:

Այդ պրակտիկ աշխատանքի կարևոր մասը համայնքներից ստացված տեղեկատվության վերլուծությունն էր, որի նպատակն էր տեղական կառավարման մարմինների գործունեության հենանիշների սահմանումը: Փոձագետները նշել են, որ նախկին ծրագրերում կիրառվել էին ազգային կամ միջազգային հենանիշները, մինչդեռ տեղական հենանիշների արժեքը տվյալ դեպքում շատ ավելի կարևոր է: Այսպես, համայնքային մսուր մանկապարտեզներում ընդգրկված երեխաների միջև 21 տոկոսային բաշխվածության առկայությունը ավելի կարևոր էր տեղական մարմինների գործունեության վերլուծության համար, քան Դանիայում այդ ուղղությամբ տարվող աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Համեմատության արդյունքում հնարավոր եղավ նաև կազմել ծառայությունների որակի վերաբերյալ հարցաթերթիկներ: Որևէ մեկ համայնքում մատուցվող ծառայությունները մյուս համայնքներում բացակայելու պատճառների վերլուծությունը թույլ տվեց տեսանելի դարձնել ընտրությունների հարցերում տեղական մարմինների կողմից կիրառվող մոտեցումները: Ներգաղթի դիտարկման ընթացքում փորձագետները ներկայացրեցին նախորդ հետազոտումների արդյունքները, ըստ որոնց երկիր ներգաղթող կանանց կարելի է բաժանել երկու պայմանական խմբերի, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են հատուկ կարիքներ: Առաջին խմբի համար կարևոր է մերձեցումը երկրի պայմաններին, մինչդեռ երկրորդի համար՝ ընտանիքի հետ կապերի պահպանումն ու հնարավորինս շատ միջոցների խնայումը: Օգտվելով այդ տվյալներից խմբի անդամները գաղափարների հետախուզման շնորհիվ կարողացան մշակել նմանատիպ խնդիրների լուծման տարբերակները:

Եզրակացություններ.
- տեղական մակարդակով տվյալների վերլուծության անհրաժեշտություն
- ազգային վիճակագրական ծառայությունը չի տրամադրում միկրոմակարդակի տվյալներ
- շրջաններում առկա տվյալների որակը և ծավալը ոչ միշտ է բավարար:

Քաղաքականության և ծախսերի համապատասխանեցում

Աուդիտի գործընթացի ներքո օգտակար է նաև բյուջետային որոշումների և քաղաքականության/ծրագրային որոշումներ միջև կապի բացահայտումն ու ուսումնասիրումը: Ինչպես արդեն նշվել էր սույն աշխատանքում, գենդերային բյուջետավորումը հաճախ համարվում է այդ երկու ոլորտների միջև առկա ճեղքվածքը փակելու միջոց, որն ապահովում է հատկացվող միջոցների բավարարությունը ռազմավարական նպատակների և ծրագրերի իրականացման կարիքների համար: Ծրագրերն իրականացնող և ծառայություններ մատուցող անձնակազմի ներգրավումը ռեսուրսների հատկացման գծով որոշումների կայացման գործընթացում հանդիսանում է ռազմավարական արմատավորման գործընթացի կարևոր մասը:

3.3 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Եվրոպայի տարբեր երկրներում կառավարության ապակենտրոնացման մակարդակը տարբեր է: Շրջանային և տարածքային կառավարությունների իրավասությունների մակարդակը և շրջանակը, մասնավորապես

հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում, կանխորոշում է վերջիններիս կողմից ցուցաբերվող գենդերային մոտեցումները: Ապակենտրոնացումը պետական ֆինանսների ոլորտում թափանցիկության ապահովման, ինչպես նաև տեղական մակարդակով գործընթացին մասնակցելու հնարավորությունների հզորացման գրավականն է: Հանրային նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման հարցերում շրջանային և տեղական կառավարությունների մասնակցությունը կարող է ավելի արդյունավետ լինել: Բացասական կողմը կայանում է նրանում, որ տեղական մարմինների հնարավորությունները հաճախ սահմանափակվում են միջոցների պակասի և աղքատության խնդիրների հրատապության պատճառով:

Եվրոպայի տարբեր երկրներում գենդերային բյուջետավորման փորձեր են անցկացվում տեղական և շրջանային մակարդակով: Վերջիններս անգնահատելի տեղեկատվական աղբյուր են հանդիսանում և այն սույն աշխատանքում ամբողջությամբ ներկայացնելը հնարավոր չէ, քանի որ դրա համար անհրաժեշտ է համապարփակ համեմատական վերլուծություն: 2008 թ. հունիսին Իսպանիայի Բիլբաո քաղաքի քաղաքապետարանի և Բիսկայի շրջանային կառավարության կողմից Եվրոպական գենդերային բյուջետավորման ցանցի մասնակցությամբ կազմակերպված միջազգա-

յին համաժողովը լավ օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է փորձի փոխանակում իրականացնել Եվրոպական մակադակով. (www.generoypresupuestos.net): Մեկ այլ օրինակ է Իսպանիայի Տեղական և շրջանային գենդերային բյուջետավորման ծրագրերի ցանցը: Նման ցանցային հնարավորությունները կարևորվում են ինչպես կառավարության կազմում, այնպես էլ դրանից դուրս աշխատող գործիչների համար և նպաստում են գենդերային բյուջետավորմանը ռազմավարական բնույթ հաղորդելու գործընթացին:

Իտալիայում, որտեղ դեռևս ազգային մակարդակով նման ծրագրեր չեն իրականացվել, գոյություն ունի 12 շրջաններ և 9 համայնքներ միավորող ցանց (2006 թ. դրությամբ), որը թույլ է տալիս գիտելիքներ փոխանակել և խթանել գենդերային բյուջետավորման գործընթացը:

3.4 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Հավանաբար սա այն մակարդակն է (այսինքն՝ երբ դիտարկվում են կոնկրետ ծրագրի համար հատկացվող միջոցները), որի շրջանակում գենդերային վերլուծությունն առավել դյուրին է: Ծրագրերը կազմելիս հաշվի պետք է առնվեն թիրախային խմբին բնութագրող տվյալները: Միևնույն ժամանակ, ըստ սեռի

ապախոշորացված տվյալների, պակասը կարող է անհնարին դարձնել շահառուների կառուցվածքային վերլուծությունը: Փոքր ձեռնարկությունների զարգացման գծով մեկ ծրագրի դեպքում, երբ հնարավոր չեղավ որոշել ծրագրում ընդգրկված ձեռնարկություններում կին և տղամարդ ղեկավարների հարաբերակցությունը, ծրագրի ուսումնասիրության արդյունքում հաջողվեց միայն մասնակի պատկեր ստանալ, որը բավարար չէր: Գենդերային բյուջետավորման գծով այս ուսումնասիրության դրական արդյունքը նրանում է, որ վերջինս հետագա ծրագրերի ժամանակ տվյալների հավաքագրման արդյունավետ համակարգ է ստեղծում:

Շատ հաճախ ծրագրային մակարդակով վերլուծությունների ուշադրության կենտրոնում է ծրագրում գենդերային նպատակների ձևավորման և դրանց իրականացման աստիճանը: Նման դեպքերում կարևոր է հնարավորինս շատ տեղեկատվություն ստանալ թիրախային խմբի վերաբերյալ: Այսպես, եթե ծրագիրը տեղական մակարդակով ուսումնասիրում է երիտասարդ գործազուրկների կարիքները, անհրաժեշտ է կազմել յուրաքանչյուր տարածքում երիտասարդ գործազուրկների ժողովրդագրական պատկերը: Սեռի, տարիքի, կրթական մակարդակի մասին տվյալներից բացի անաշխատունակության, ազգության, մայրենի լեզվի մասին առկա տեղեկու-

թյունները կարող են բացահայտել հնարավոր արգելքները, որոնք պետք է վերացնել:

Գենդերային բյուջետավորման ենթակա ծրագրերն ընտրելիս մոտեցումներից մեկը կարող է լինել մի շարք ծրագրերի գենդերային կարևորության որոշումը և ըստ այդ առաջնահերթության դասակարգումը: Թեպետ նման մոտեցման արժանիքներն անկասկած են, միևնույն ժամանակ գաղտնիք չէ, որ գենդերային բյուջետավորումը արդյունավետ կազմակերպելու դեպքում հնարավոր է պետական հողվածում իրականացվող բոլոր ծրագրերը հասցնել դրական ավարտի և խթանել գենդերային իրավահավասարության հարցում ակնկալվող արդյունքների նվաճումը:

Գենդերային իրավահավասարության նկատմամբ իրական ազդեցության մասին հստակ պատկերացում կարելի է ստանալ այլ փոխկապակցված ծրագրերի հետ համեմատական վերլուծություն անցկացնելու միջոցով: Նման վերլուծություն կարող է անցկացվել մի շարք ծրագրերի գծով պատասխանատու գործակալության կողմից: Համեմատական վերլուծության տարածումը ոլորտային և միջոլորտային մակարդակով թույլ է տալիս առավել լայն պատկերացում ստանալ հաջողությունների և թերությունների և անհրաժեշտության դեպքում միջոցների միջոլորտային վերաբաշխման մասին:

Չափազանց կարևոր է, որպեսզի ֆինանսական հարցերի և ծառայությունների մատուցման ու ծրագրերի իրականացման գծով պատասխանատուները գործեն համախմբված և միասնական պատասխանատվություն կրեն գենդերային իրավահավասարության նպատակներին հասնելու համար: Գենդերային վերլուծության արդյունքում բացահայտված միջոցների բաշխման անհրաժեշտությունը միշտ չէ որ կարող է իրականացվել, ուստի անհրաժեշտ է որոշումների կայացման համակարգը համապատասխանեցնել արդյունքների բարելավման նպատակներին:

Այս մակարդակով իրականացվող աշխատանքների շարքում կարելի է նշել շահառուների գնահատման և լայն թիրախային խմբերի հետ խորհրդատվության կարևորությունը: Գենդերային կարիքների վրա հիմնված թիրախային խմբերի պատկերի շարունակական հստակեցումը թույլ է տալիս կատարելագործել սահմանված նպատակները:

GenderAlp-ը ԵՄ-ի Տարածաշրջանային ծրագրի ներքո իրականացվող միջազգային ծրագիր է, որը համախմբում է Ավստրիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Սլովենիայի 12 գործընկեր քաղաքաները և շրջանները, ինչպես նաև դիտորդի կարգավիճակով մասնակցող 12 այլ քաղաքներն ու շրջանները և միտված է տարածական պլանավորման և բյուջետային ծրագրավորման ժամանակ գենդերային մոտեցումների կիրառմանը: Ծրագրի գլխավոր նպատակն է գենդերային ռազմավարության արմատավորման նպատակով գենդերային բյուջետավորման խթանումը:

Ծրագրի շահառուներն են պետական, տեղական և շրջանային մարմինների ներկայացուցիչները, որոնց համար ստեղծվում է գիտելիքային հենք և զանազան գործիքներ ու մեթոդաբանություններ (մանրամասները ներկայացված են. www.genderalp.com կայքում):

GenderAlp ծրագրի ներքո իրականացվող ծրագրերից մեկում ներառված են Գենուան, Մյունխենը, Վերին Ավստրիայի շրջանը, Մոնֆերատո Ռոերոն և Զալցբուրգը : Ծրագրի նպատակն է գենդերային դյուրազգաց վերլուծությունների գծով մեթոդաբանության մշակումը: Ծրագիրը մեկնարկեց երկու հետևյալ գլխավոր հարցերին պատասխան տալով.

1. Որո՞նք են կին և տղամարդ բնակչության կարիքները,
2. Ինչպե՞ս են տեղական մարմինները բավարարում կանանց և տղամարդկանց կարիքները, օգտվելով հետևյալ հնարավորություններից.
- ռազմավարության ընտրություն
- բյուջեի ներքո ստանձնած պարտավորություններ
- մատուցվող ծառայություններ:

Բնակչության սոցիալ-տնտեսական պատկերը կազմելու համար սահմանվել են չորս տարիքային խմբեր.

I. երեխաներին և չափահասներին հատկացվող խնամք՝ 0-19 տարեկան
II. ընտանեկան համերաշխություն և աշխատանք՝ 20-59 տարեկան
III. խնամք և օժանդակություն՝ 60-79 տարեկան
IV. ավելի բարձր տարիքի բնակչությանը հատկացվող խնամք

Բնակչության վերլուծական սխեման ստեղծելուց հետո հաջորդ բաղադրիչն է հետևյալ հարցերի շուրջ ցուցանիշների սահմանումը.

- գենդերի հետ ուղղակիորեն առնչվող խնդիրներ
- գենդերի հետ անուղղակիորեն առնչվող խնդիրներ
- շրջակա միջավայրի հետ առնչվող գենդերային խնդիրներ:

Ծրագրի նպատակն է միջազգային մակարդակով գենդերային վիճակագրական տվյալների ընդհանուր մանրակերտի մշակումը:

3.5 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մինչ ներկա պահը գենդերային բյուջետավորման գծով աշխատանքի զգալի մասն իրականացվել է փորձնական ծրագրերի շրջանակում, որոնց մի մասը կազմակերպվել է հասարակական կազմակերպությունների, իսկ մյուսը կառավարության գերատեսչությունների կամ գործակալությունների կողմից: Երկրորդ դեպքում ծրագրի իրականացումը հաճախ պատվիրակվել է որևէ մի հասարակական կազմակերպության: Նման աշխատանքների համար առավել բնորոշ է ծախսերի գծով գենդերային վերլուծությունը:

Գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիրը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու գենդերային դյուրազգաց մոտեցումներին, որը հատկապես կարևոր է այն ադմինիստրատիվ մարմինների համար, որոնք իրենց աշխատանքում անտեսում են գենդերային մոտեցման կարևորությունը կամ կառչում են այն տեսակետից, որ բյուջեի գենդերային ազդեցությունը չեզոք է: Հետևաբար փորձնական ծրագիրը կարևորություն է ձեռք բերում իրազեկվածության բարձրացման և կարծիքների վերանայման տեսակետից, որն իր հերթին հանդիսանում է գենդերային ռազմավարության արմատավորման մեկնարկային կետը:

Աշխատանքի ծավալը, վերլուծությունների որակը, ձեռք բերված գիտելիքի մակարդակը և արդյունքների շարունակականության ապահովումը կախված են քաղաքական նվիրվածության աստիճանից և ծրագրին հատկացվող միջոցների մակարդակից: Մի շարք փորձնական ծրագրեր, հանգեցնելով կարևոր արդյունքների և հանդիսանալով աշխատանքի իրականացման լուրջ ազդակ, միաժամանակ այդպես էլ կյանքի չեն կոչվում: Հաճախ դա կարող է նշանակել ձեռք բերված գիտելիքների կորուստ, կամ նույնիսկ այն, որ գենդերային ռազմավարության արմատավորման գծով առաջընթացի փոխարեն նահանջ է տեղի ունեցել:

Փորձնական ծրագրերը բարձր մակարդակի օժանդակության կարիք ունեն: Քանի որ դրանցից շատերն իրականացվում են ծրագրային մակարդակով, պետական գերատեսչության կողմից օժանդակության կարիք կարող է և չառաջանալ: Սակայն, եթե նման օժանդակությունն ի սկզբանե առկա է, ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում ձեռք բերված արդյունքները տարածելու և այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը վերահսկելու համար: Միևնույն ժամանակ, եթե որևէ պետական գերատեսչության հանձնարարվում է ծրագիր նախաձեռնել կամ օժանդակել իրականացվող ծրագրին, ապա դա ինքնստինքյան ենթադրում է որոշակի ներգրավվածություն, ուստի դրական արդյունք:

Սկզբնական փուլում համապարփակ ծրագրավորումը շատ կարևոր է: Ստորև բերվում են այդ հարցի շուրջ մի շարք նկատառումներ.

- Ծրագրավորումը պետք է նախատեսի գիտելիքի հավաքագրում, յուրացում և տարածում: Փորձնական ծրագրի արդյունքում գենդերային տեղեկատվության գանձատուն է ստեղծվում և այն անհրաժեշտ է ներառել համակարգում: Ծրագրավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ծրագրի արդյունքների գույքագրումը և համակարգում մուտքագրելու համար անհրաժեշտ կապուղիների ստեղծումը:

- Պետք է ընտրել վերլուծության ռազմավարական ոլորտը, որպեսզի արդյունքում ձեռք բերված գիտելիքները թույլ տալ կատարել կարևոր եզրակացություններ, նախապատվությունը տալով գենդերային իրավահավասարությանը: Սովորաբար նախընտրությունը տրվում է ակնհայտ գենդերային ուղղվածություն ունեցող ոլորտներին: Միևնույն ժամանակ ավելի ցանկալի է ընտրել այն որոլտը, որի գենդերային կապն այդքան ակնհայտ չէ և արդյունքում ընդլայնել գենդերահեն գիտելիքը:

- Ծրագրավորման գործընթացի սկզբից անհրաժեշտ է իրականացնել ներթափանցիկ ծրագրավորում, որը կապահովի փորձնական ծրագրի շարունակականությունը, դրանով իսկ նպաստելով գենդերային ռազմավարության արմատավորմանը:

- Փորձնական ծրագրի իրականացման համար պետք է հատկացվեն բավարար միջոցներ: Անհրաժեշտ է ներգրավել փորձագետների, որոնք կաջակցեն և կուղղորդեն հետազոտման գործընթացը, որի համար պետք է համապատասխան միջոցներ նախատեսել:

- Բարձր մակարդակով օժանդակությունից բացի, իրականացնող անձնակազմին պետք է հանձնարարել ծրագրի վերահսկողությու-

նը, որն իր հերթին հնարավորություններ կստեղծի նրանց ուսուցման և ուղղորդման համար:

- Ցանկալի է պլանավորման գործընթացում ներառել կազմակեպության բոլոր կառույցները ներկայացնող անձնակազմի անդամներին, այդ թվում՝ բյուջետային, ռազմավարության, կազմակերպչական, տեղեկատվական տեխնոլոգիաների, ծառայությունների մատուցման, գնահատման և վերլուծության ստորաբաժանումների անդամներին: Եթե փոխվում են ռազմավարական առաջնահերթությունները, ապա այդ մասին պետք է իրազեկված լինեն կազմակերպության բոլոր անդամները և լավ պատկերացնեն իրենց դերն այդ փոփոխությունում: Բոլոր կառույցների ներգրավվումն ի սկզբանե կապահովի փոփոխության արդյունավետությունը, ինչպես նաև թույլ կտա առավել արդյունավետ օգտագործել կազմակերպությունում առկա գիտելիքային պաշարները:

- Ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Գենդերային բյուջետավորումը նաև նշանակում է կառավարման հարցերում ժողովրդավարության սկզբունքների սերմանում, ծառայություններից օգտվողների շրջանակի ընդլայնում, գենդերային իրավահավասա-

ության հարցերում կանանց դերի և մասնակցության բարձրացում: Հասարակության ակտիվ մասնակցությունը գենդերային փորձնական ծրագրի իրականացման գործընթացում կարող է զանազան ձևեր ընդունել, օրինակ՝ կանանց ներկայացուցչական խմբերի պրոֆեսիոնալ աջակցություն, բյուջետային ծրագրի կամ վերլուծության առարկա հանդիսացող ծրագրի թիրախային խմբի կանանց ներկայացուցիչներից բաղկացած դիտորդական խմբի կազմակերպում, գենդերային բյուջետավորման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքային կապերի հաստատում և այլն:

ԲԱԺԻՆ 4.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Քաղաքացիական հասարակությունը հանդիսացել է գենդերային բյուջետավորման աշխատանքների առաջ մղող ուժը Եվրոպայում: Տեսանկյուններից մեկն այն է, որ աշխարհում գենդերային բյուջեները ստեղծվել են ի շնորհիվ ֆեմինիստական ակտիվ քաղաքականության: (Sharp & Broomhill, 2002 թ.). Գենդերային իրավահավասարության հետ կապված կառավարության ստանձնած պարտավորությունները պահպանելու նպատակով քաղաքացիական սոցիալական խմբերը, ելնելով գենդերային հեռանկարից, հետամուտ եղան խթանելու գենդերային բյուջետավորումը, որպես մակրոտնտեսական քաղաքականության վրա ազդելու միջոցներից մի տարբերակ: Հուսախաբ լինելով գենդերային հիմնական ծրագրի ոչ լիարժեք իրականացմամբ, շատ համախոհներ և ակտիվիստներ հավատացած են, որ գենդերային բյուջետավորումը ներունակ է ներկայացնելու այն վերլուծությունը, որը պահանջում է փոփոխություն: Ծառայելով որպես կամուրջ ռազմավարական

որոշումների և ռեսուրսների բաշխման միջև, գենդերային բյուջետավորումը շեշտադրելով դրամի հոսքը կարող է ցույց տալ գենդերային իրավահավասարությանը հասնելու քաղաքականության թույլ կողմերը, երբ համապատասխան միջոցներ չեն տրամադրվում քաղաքականության իրականացման համար:

Գենդերային բյուջետավորման վերաբերյալ վաղ շրջանի գրականությունը նկարագրում է ամբողջ աշխարհում գենդերային բյուջետավորման նախաձեռնության խնդիրների հետ կապված տարբեր մասնակիցների ընդգրկումը: Այն երկրներում, որտեղ գենդերային բյուջետավորումն ունեցել է մեծ ազդեցություն, դա տեղի է ունեցել մասնակիորեն ի շնորհիվ կառավարությունից դուրս և կառավարության ներսում քաղաքացիական հասարակության ազդեցության գոյակցության շնորհիվ: Շատ դեպքերում ստեղծվել են ամուր համագործակցության կապեր երկու մասնակից խմբերի միջև, որն ուղեկցվել է փորձի և գիտելիքի փոխանակմամբ, իսկ մեկ այլ դեպքում քաղաքացիական հասարակության արտաքին խումբը խրախուսել է կառավարման մարմինների աշխատանքը, միաժամանակ պահպանելով իր անկախությունը որպես վերահսկիչ և քննադատ:

Գիտնականները կարևոր դեր են խաղացել որպես քաղաքացիական հասարակության

խմբերի անդամներ, և որպես անհատ փորձագետներ: Նրանք աջակցել են վերլուծության ձևերի մշակմանը, ինչպես նաև գենդերային խնդիրներին վերաբերող փորձագիտական ծառայություններ են մատուցել պաշտոնական անձանց: Գիտնականների դերը մեծ էր հատկապես Իտալիայում, որտեղ քաղաքացիական հասարակության խմբերը այնքան էլ զարգացած չէին ինչպես Եվրոպայի մյուս երկրներում: Իտալիայում գենդերային բյուջետավորումը ներկայացվեց Հռոմում կազմակերպված միջազգային սեմինարի ընթացքում, երկու գիտնականների կողմից: Սեմինարը կազմակերպվել էր Հավասար հնարավորությունների հատուկ հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ: Չնայած Իտալիայում գենդերային բյուջեի նախաձեռնության հարցերով զբաղվում են կառավարության մարմինները, գիտնականները այդ գործում ընդգրկված են, որպես խորհրդատու փորձագետներ, որոնք իրականացնում են տարբեր վերլուծություններ և տալիս համապատասխան եզրակացություններ:

Առաջ նայելով դեպի գենդերային բյուջետավորման պրակտիկայի ուժեղացմանը և զարգացմանը, քաղաքացիական հասարակության գործիչները, հետազոտողները և ակտիվիստները կարևորում են ազգային բյուջեների մշակման ավելի խորն ըմբռնման անհրաժեշտությունը, որպեսզի ավելի լավ ներգրավ-

վեն բյուջեների և բյուջե կազմողների հետ կապված աշխատանքներում: Թեև տարեկան բյուջեների սահմանված գործընթացների հետ կապված ընդհանուր տեղեկատվությունը հասանելի է, գոյություն ունի գիտելիքի բաց բյուջեների բյուրոկրատական, տեխնիկական կողմերի վերաբերյալ: Բյուջեի կազմման կարևոր կողմերից մեկն է հանդիսանում կառավարության կողմից քաղաքական որոշումների կայացումը: Քաղաքացիական հասարակությունն իր ուրույն դերն ունի ազդելու այդ որոշումների վրա, ավելի արդյունավետ ձևով խթանելով գենդերային իրավահավասարությունը: Այնուհանդերձ, երբ գործը հասնում է միջոցների բաշխման ամենօրյա գործարարությանը, ավելի շատ թափանցիկություն է պահանջվում: Երբ որ քաղաքացիական հասարակության ներսում քաղծառայողները կարողանան օգուտ ստանալ գենդերային իրազեկությունից, քաղաքացիական հասարակության և քաղծառայողների միջև երկխոսությունը նրանց երկուսի համար էլ շահավետ կլինի և կնպաստի գենդերային բյուջետավորման իրականացմանը:

Քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող գործառույթները բազմաթիվ են և ներառում են հետևյալը.

- գենդերային բյուջետավորման հիմնավորում
- վերլուծական գործիքների ցուցադրում

- հանրային կրթության նախաձեռնում
- լոբբինգ
- ծախսային հաշվարկների իրականացում
- վերապատրաստման և խորհրդատվական ծառայությունների մատուցումը պետական կառավարման մարմիններին
- ձեռնարկների և տեղեկատվական նյութերի հրատարակում
- այլընտրանքային (ստվերային) հաշվետվությունների պատրաստումը և այլ մոնիտորինգային գործունեություն:

Հետաքաքրքրական է նշելու Շարփի և Բրունհիլի դիտարկումները 80-ական թվականներին Ավստրալիայում գենդերային բյուջետավորման աշխատանքի հետ կապված հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ: Այդ ժամանակ կառավարության գերատեսչությունները դաշնային, պետական և տարածքային մակարդակներով հանձն առան ներկայացնելու կանանց բյուջեի քաղվածքները հիմնված պետական բյուջեի մանրամասն վերլուծության վրա: Այս կարգի օրինակները համարվում էին «կառավարության ներսում» իրականացվող գործողություններ, որոնց գոյությունն և հաջողությունը կապված էր կանանց քաղաքականության իրականացման մեխանիզմների հետ, որի ստեղծման հիմքում ընկած էր կանանց շարժումը, որի կազմում ընդգրկված էին մեծ թվով ֆեմինիստներ: Այս «ֆեմոկրատները», երբ որ սկեցին ճանաչում

ստանալ, խթանեցին գենդերային բյուջետավորման գործընթացը: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ նրանք սահմանափակեցին կառավարությունից դուրս կանանց մասնակցությունն այդ գործընթացում (Sharp & Broomhill, 2002 թ.): Փորձը ցույց է տալիս, որ բյուջետային հատկացումներում էական փոփոխություն մտցնելու համար անհրաժեշտ է կիրառել քաղաքական ճնշում կառավարությունից դուրս, խրախուսելով կառավարության ներսում ընթացող աշխատանքները:

Քաղաքացիական հասարակության խմբերի կողմից իրականացվող կրթության և իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքներում գլխավոր գործոններից մեկը համարվում է խորհրդարանականների հետ տարված աշխատանքը: Հաշվի առնելով բյուջետավորման գործընթացների բնույթը, որտեղ մեկ կառավարական գերատեսչություն կամ մեկ նախարար է պատասխանատու և որտեղ որոշումները կայացվում են քիչ քանակի թվով խորհրդարանականների կողմից, հատկապես նրանք, ովքեր ընդդիմություն են, ունեն փոքր ներդրում: Շատ հաճախ նրանք պատրաստ են սովորելու տարբեր արդյունավետ եղանակներ միջամտելու որոշումների կայացմանը, ինչպես նաև ներկայացնելու նոր վերլուծություններ, ապահովել թափանցիկությունը և նպաստել հասարակության հետաքրքրությունների բացահայտմանը: Շատ խորհրդա-

կաններ Եվրոպայում, հատկապես Եվրոպական միության բոլոր անդամ պետություններում մասնակցել են քաղաքացիական հասարակության խմբերի կողմից կազմակերպված սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին:

Ստորև բերված են տեղեկություններ առաջին գծում գտնվող քաղաքացիական հասարակության խմբերի վերաբերյալ, որոնք խթանում են գենդերային բյուջետավորումը: Բացի իրենց երկրներում իրականացվող աշխատանքից, դրանք բոլորը հանդիսանում են Եվրոպական Գենդերային բյուջետավորման ցանցի անդամներ, որն իր հերթին բաժանված է տարբեր ճյուղերի: Այդ ճյուղերն են.

- Ավստրիա – Գենդերի և պետական ֆինանսների հարցերով Դիտորդների խումբ
- Գերմանիա – Դաշնային գենդերային բյուջեի ծրագիր (BigBudget)
- Իսպանիա – Անմիջական գենդերային ազդեցության հարթակ (La Plataforma Impacto de Género Ya)
- Մեծ Բրիտանի – Մեծ Բրիտանիայի կանանց բյուջետավորման խումբ
- Եվրոպայի գենդերային բյուջետավորման ցանց

Ավստրիա - Գենդերի և պետական ֆինանսների հարցերով Դիտորդների խումբ

Ավստրիայի Գենդերի և պետական ֆինանսների հարցերով Դիտորդների հասարակական խումբը սկսել է իր գործունեությունը 2000թ-ին: Այդ ժամանակվանից ի վեր խումբը հաջողություն է ունեցել խրախուսելով հասարակական կազմակերպություններին, ընդդիմադիր կուսակցություններին և կառավարությանը ընդգրկվելու գենդերային բյուջետավորման հայեցակարգերի և ընթացակարգերի գործընթացներում: 2002թ. խումբը հրատարակել է մի գիրք, որը նկարագրում է գենդերային բյուջետավորման միջազգային փորձի ընդհանուր պատկերը, ընդհանուր հայեցակարգերը հարմարեցնելով ավստրիական համատեքստին և ներկայացնելով մի շարք մոտեցումներ ուղղված ավստրիական ֆեդերալ բյուջեի կազմմանը: Գիրքը կոչ է անում ավստրիական կառավարությանը, ընդգրկելով նրա բոլոր մակարդակները՝ ֆեդերալ, տարածքային և տեղական, և ներկայացնում իմաստալից գենդերային բյուջետավորման առաջարկներ ներառելու կառավարության քաղաքականության մեջ, ինչպես նաև առաջարկում է ուղիներ այդ գործընթացները կազմակերպելու համար: Այն նաև խորհուրդ է տալիս, թե ինչպես փոխել կառավարության քաղաքականությունը ավելի բարձր մակարդակի գենդերային իրավահավասարության հասնելու համար:

Դիտորդների խմբի ընթացիկ աշխատանքները պայմանավորված են մի շարք կարևոր սկզբունքներով.

- գենդերային բյուջետավորումը շատ ավելին է քան եկամուտների գենդերային վերլուծությունը
- բյուջեների հետ առնչվող գործընթացները պահանջում են ավելի շատ թափանցիկություն և փոփոխություններ, որպեսզի ապահովեն ավելի մեծ թվով մարդկանց մասնակցությունը
- վերլուծության արդյունքները պետք է հանգեցնեն այլընտրանքային քաղաքականության
- վերլուծությունը պետք է պարունակի ամբողջ մակրոտնտեսական ռազմավարությունը
- գենդերային բյուջետավորումը նախատեսում է քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Ավստրիական ֆեդերալ կառավարությունը ներկայացրեց գենդերային բյուջետավորումը 2004թ-ին: Ի պատասխան այդ քայլին, որը Դիտորդների խումբը դիտարկեց որպես կառավարության նախաձեռնություն, և որն ընկալվեց որպես թույլ պլանավորման, սահմանված նպատակների, ինչպես նաև փոխըմբռնման և հմտությունների պակասի տեսանկյունից, խմբի որոշ անդամներ

առաջարկեցին համագործակցել կառավարության հետ՝ առաջարկելով իրենց փորձագիտությունը: Խմբի վերջին որոշումներից մեկն է եղել կենտրոնանալ ավելի շատ արտաքին լոբբինգի վրա:

Ի շնորհիվ Դիտորդների խմբի ուժեղ լոբբինգի և մասնավորապես ստեղծված հնարավորության շնորհիվ, 2007թ.-ին Ավստրիայում ընդունվեց բյուջեին վերաբերվող օրենքների բարեփոխումները, որն իր մեջ ներառում է դրույթ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ, որը սահմանադրական օրենքի մակարդակով ներառվել է բարեփոխումների համատեքստում և՛ որպես նպատակ, և՛ որպես բյուջետավորման հիմնական սկզբունք: Համաձայն Սահմանադրության, կառավարության բոլոր օղակները պարտավոր են ձգտել կանանց և տղամարդկանց իրավահավասար կարգավիճակին:

Վերջերս Դիտորդների խումբը նորից իր ուշադրությունը կենտրոնացրեց հետազոտական աշխատանքի վրա, ընդլայնելով գենդերային բյուջետավորման սկզբունքը ժողովրդավարական տեսությունից, ինչպես նաև որպես տնտեսագիտական տեսության հեռանկար:

Գերմանիայի Դաշնային գենդերային բյուջեի ծրագիր (BigBudget)

Դաշնային գենդերային բյուջեի ծրագիրը (BigBudget), որն իր աշխատանքները սկսել է 2006թ.-ին, ընդգրկում է կանանց և տղամարդկանց, որոնք որպես խորհրդատուներ, գիտնականներ և քաղաքական գործիչներ աշխատել են գենդերային բյուջետավորման ոլորտում, ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակներով: BigBudget-ը ստեղծվել է «Բեռլինում գենդերային դյուրազգաց բյուջե» նախաձեռնության շրջանակներում և նպատակ ունի Գերմանիայում ֆեդերալ մակարդակով ամրապնդելու գենդերային բյուջետավորման ռազմավարությունը:

Այդ ծրագրի ներքո Գենդերային բյուջետավորումը դիտարկվում է որպես երկրի Սահմանադրությամբ և Դաշնային կառավարության ընթացակարգի միասնական կանոններում (GGO)[3] ամրագրված գենդերային իրավահավասարության նպատակին հասնելու ուղությամբ անհրաժեշտ և բավարար ռազմավարություն, որը հիմքեր է ստեղծում գենդերային ռազմավարության արմատավորման համար: Ծրագիրն ընդգծում է գենդերային ազդեցությունների գնահատման, հարկային համակարգի, բյուջետային եկամուտների (օրինակ՝ մասնավորեցումից ստացվող մուտքերի), ինչպես նաև ֆիսկալ և մակրոտնտեսական որոշումների, որպես Գենդերային բյուջետավորման տարրերի, զննման անհրաժեշտությունը:

[3] GGO-ի Բաժին 2-ում նշվում է «Տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը անփոփոխ ղեկավար սկզբունք է, որն պետք է վայելի Դաշնային նախարարությունների կողմից համապատասխան ոլորտներում իրականացվող քաղաքական, օրենսդրական և վարչարարական գործունեության ամբողջական աջակցությունը (gender mainstreaming)»:

Գործունեության հիմնական ոլորտներն են.

- լոբբիստական աշխատանքը (հիմնականում մամլո հաղորդագրություններ)
- բաց նամակներ
- օժանդակում ստվերային հաշվետվություններին
- այլ հասարակական կազմակերպությունների հետ միասնական ցանցում գտնվելը:

Սկզբնական շրջանում բավականաչափ աշխատանք է տարվել Գերմանիայի ֆեդերալ կառավարության գենդերային բյուջետավորմանն ուղղված գործնական կիրառության ուսումնասիրությունը հրատարակելու ուղղությամբ, որը լույս ընծայվեց 2007թ. հոկտեմբերին: Այնուհետև հիմնական խնդիր դարձավ ուսումնասիրության կողմից առաջադրված քայլերի իրականացումը:

Բացի այդ, ծրագրի անդամները ակտիվորեն մասնակցում են համաժողովներին, ներկայացնելով իր տեսանկյունը գենդերային բյու-

ջետավորման վերաբերյալ, ստանալով էլ ավելի մեծ աջակցություն և պատրաստում են մի գիրք գենդերային բյուջետավորման վերաբերյալ: BigBudget-ը կազմում է գերմանական նմանատիպ խմբերի և Եվրոպական գենդերային բյուջետավորման լայնածավալ ցանցի մի մասը (տես. www.gender-budgets.de):

Դաշնային ծրագրի (ինչպես նաև Բեռլինյան ծրագրի) վերջին դիտարկմամբ մտահոգություն է արտահայտվում այն հանգամանքի վերաբերյալ, որ կառավարության ներքո իրականացվող աշխատանքը հիմնականում տեխնիկական բնույթ է կրում և սահմանափակվում է քանակական վերլուծությամբ: Ակնհայտ է, որ եկել է ժամանակը ռազմավարական հիմքերի վրա դնել գենդերային բյուջեի գծով աշխատանքը և ուղիներ որոնել կառավարության աշխատանքները ֆեմինիստական վերլուծությամբ սատարելու համար: Ավելին, գենդերային ռազմավարության դաշնային մակարդակով արմատավորման գծով նախորդ կառավարության կողմից ակտիվ տարվող աշխատանքները մատնվել են անգործության: Ներկայումս կառավարության կողմից իրականացվող գենդերային իրավահավասարության քաղաքականությունը սահմանափակվում է ընտանեկան համերաշխության և աշխատանքի ոլորտներով: Գերմանիայի Սահմանադրությամբ ամրագրված Գենդերային ռազմավարության արմա-

տավորումը և գենդերային բյուջետավորումը, այլևս զրկված են իրենց գերակա ազդեցությունից:

La Plataforma Impacto de Género Ya

La Plataforma Impacto de Género Ya (Անմիջական գենդերային ազդեցության հարթակ), ներկայացնում է ֆեմինիստների, կանանց կոլեկտիվների, ոլորտային գործունեությամբ զբաղվող միավորումների և տարածքային համաժողովների խմբավորում, որը ստեղծվել է, որպեսզի մարտահրավեր ուղարկի իսպանական կառավարությանը ազգային բյուջեի Գենդերային ազդեցության գնահատման փաստաթուղթը չհրապարակելու համար: Վերը նշված փաստաթղթի հրապարակման իրավական պարտավորությունը ամենից ուժեղ արտահայտվել է Գենդերային ազդեցության գնահատման (ԳԱԳ) օրենքում, 2003թ. և Իրավահավասարության օրենքում, 2007թ.: Համաժողովը նշում է, որ երբ 2008թ. սեպտեմբերի 30-ին Բյուջեն ներկայացվեց Իսպանիայի ազգային խորհրդարանին, դա արդեն չորրորդ տարին էր, որ կառավարությունը չէր կատարում իր պարտավորությունը կապված Գենդերային ազդեցության գնահատման:

2007 թվականին, La Plataforma Impacto de Género Ya-ն, իրավական բացարկ հայտարարեց կառավարությանը: Այդ բացարկը

ժխտվեց դատախազի կողմից, սակայն այդ ժամանակից ի վեր Audiencia Nacional-ի կողմից ընդունվեց, որպես իրավասու մարմին:

2008 թվականին, երբ բյուջեն ներկայացվեց խորհրդարան, այս հարցը մամուլի ուշադրությանն արժանացավ: ԳԱԳ-ի իրականացման գծով աշխատանքները դրա գծով պատասխանատու Ֆինանսների դեպարտամենտի և Հավասարության նախարարության համատեղ իրականացման շուրջ մամուլում անցկացված լայնածավալ քննարկումը հանգեցրեց ԳԱԳ-ի գծով հաշվետվության ուշացված հրապարակմանը:

Լրատվամիջոցների ուշադրությունը կարևոր է հանրությանը այդ խնդրի վերաբերյալ իրազեկելու համար, որն իր հերթին կարևոր է կառավարության և մասնավորապես այդ հարցի գծով պատասխանատու Ֆինանսների դեպարտամենտի վրա հասարակական ճնշում գործադրելու տեսակետից: Ազգային մակարդակով գենդերային արդար բյուջե կազմելու նպատակով սեփական միջոցներով արդյունավետ լրատվական արշավ կազմակերպելուց բացի, La Plataforma Impacto de Género Ya-ն դիմում է մի շարք այլ միջոցների ևս, որոնց թվում են էլեկտրոնային միջնորդագրերը, «բլոգերի» և այլ ինտերնետային գործունեության կազմակերպումը, ինչպես նաև կառավարության ռազմավարական անդամներին ու պե-

տական գործիչներին գործնական քայլեր կատարելու բացնամակներով դիմելը: «Հարթակ»-ը նաև կազմակերպել է մի շարք հանդիպումներ Իսպանիայի ազգային խորհրդարանի անդամների հետ:

Գենդերային ազդեցության գնահատման ուշ հրապարակումից հետո La Plataforma Impacto de Género Ya-ն 2008 թ. հոկտեմբերին հանրահավաք անցկացրեց, որի ժամանակ քննարկվեց այդ հաշվետվության ազդեցությունը գենդերային իրավահավասար բյուջե կազմելու քարոզարշավում:

La Plataforma-ն մեծ ծավալի աշխատանք է տանում գենդերային հարցերով կանանց հասարակական խմբերի կազմակերպման և իր կազմում ներգրավման հացերում և նման խմբերն արդեն իսկ կայացել և ակտիվ մասնակցություն են ունեցել հոկտեմբերյան հանրահավաքում: Կառավարության անդամների շրջանում տարվում է համառ քարոզչական աշխատանք, որի նպատակն է ստիպել կառավարության անդամներին ավելի խորն ընկալել Գենդերային ազդեցության գնահատման ներքո կայացրած եզրակացությունները և արդյունքում լուրջ քաղաքական քննարկում կազմակերպել կանանց համար առաջնահերթ կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ:

Մեծ Բրիտանիայի կանանց բյուջետային խումբը

Մեծ Բրիտանիայի կանանց բյուջետային խումբը (ԿԲԽ) համարվում է ամենաճանաչված և հիմնավորված քաղաքացիական հասարակության խումբը, որն աշխատում է գենդերային բյուջետավորման ոլորտում: Հիմնադրված 1989թ., ԿԲԽ-ն միավորում է կին տնտեսագետներին, հետազոտողներին, քաղաքական փորձագետներին, արհմիության անդամներին և այլ ակտիվ գործիչների միասին աշխատելու գենդերային իրավահավասար հասարակության տեսլականի ուղղությամբ, որտեղ կնոջ ֆինանսական անկախությունը տալիս է նրան ավելի մեծ անկախություն աշխատանքում, տանը և քաղաքացիական հասարակությունում:

ԿԲԽ-ի աշխատանքի հիմքում ընկած է հիմնարար հարց.«Ու՞ր են գնում միջոցները և ինչ ազդեցություն դրանք ունեն գենդերային իրավահավասարության խնդրի վրա»: ԿԲԽ-ի գործունեությունը բաժանվում է երեք ընդարձակ խմբերի.

1. Արձագանքել ազգային տարեկան բյուջեի և նախաբյուջետային հաշվետվություններին
2. Խրախուսել կառավարությանը, հատկապես Գանձապետարանին, (Մեծ Բրիտանիայի Ֆինանսների նախարարություն), որպեսզի այն իր աշխատանքի մեջ ընդգրկի գենդերային բյուջետավորումը
3. Աշխատել աղքատության մեջ գտնվող կանանց հետ, աջակցելով նրանց ընդգրկմանը որոշումների կայացման գործընթացին և բերել գիտական փաստեր քաղաքականության վերաբերյալ:

Խմբի արձագանքը ազգային բյուջեի վերաբերյալ դարձել է նրա աշխատանքի հատկանշական կողմը: Տեղեկացված և սատարված լինելով անդամների աշխատանքով և հետազոտություններով, ինչպես նաև նրանց, որպես հանրային քաղաքականության պաշտպանների փորձով, արձագանքները նպատակ ունեն հստակեցնելու և ի ցույց հանելու կանանց կարիքները, միաժամանակ օգտագործելով քաղաքական հնարավորությունները: Վերլուծությունը համարվում է արժեքավոր գործիք շատերի համար, ինչպես կառավարության ներսում, այնպես էլ նրանից դուրս:

Բյուջետային օրը ավանդորեն համարվում է տարվա մեջ մեկ օր, երբ Մեծ Բրիտանիայի բնակչության լայնածավալ մասի համար ուշադրության կենտրոն է համարվում մակրոտնտեսական քաղաքականությունը, որն այժմ նշանակալից հնարավորություն է տալիս բնակչության ուշադրությունը սևեռել գենդերային իրավահավասարության վրա, որպես տնտեսական քաղաքականության կարևոր գործոններից մեկը:

Կանանց բյուջետային խումբը աշխատում է նաև նպաստելու գենդերային վերլուծության գործընթացին հենց կառավարության ներսում: Առաջընթաց է նկատվում այս ոլորտում, որը բացատրվում է կառավարության կողմից ավելի խորը և փաստացի քաղաքականության վարելու գործընթացով: Այս իմաստով հարկ է նշել, որ կանանց նախարար է նշանակվել և այժմ Գանձապետարանը պարտավորություն է ստանձնել պարբերաբար հանդիպումներ կազմակերպել նախարարների և պաշտոնյաների հետ ԿԲԽ-ի գենդերային վերլուծության և Բյուջետային ու Նախաբյուջետային հաշվետվությունների ներկայացման ու քննարկման համար:

Ընդհանուր առմամբ ԿԽԲ-ի աշխատանքը կարելի է բնութագրել որպես իրազեկվածության և հզորությունների ձևավորման ուղղությամբ կառավարության շրջանում և դրանից դուրս աստիճանական աշխատանք: Գործընկերության ճարտարագիտությունը և քաղաքացիների ու իշխանության լծակներ ունեցող այլ պաշտոնյաների աշխարհահայացքի ու հոգեկերտվածքի փոփոխումը չի դիտարկվում որպես բյուջեի անմիջական խնդիր, սակայն կարող է լիցք հաղորդել հետագա փոփոխություններին: Նման օրինակ է հանդիսանում ԿԽԲ-ի կողմից Ճախսային ծրագրի գենդերային վերլուծություն կատարելու վերաբերյալ Գանձապետարանում տարված բացատրա-

կան աշխատանքը: ԿԽԲ-ի ծրագրի ղեկավարը կես դրույքով ընդգրկվել է Գանձապետարանի աշխատանքում որպես ծրագրի ղեկավար և այդ պաշտոնում ստացել ԿԽԲ-ի ամբողջական տեխնիկական օժանդակությունը:

ԳԱԳ ծրարգի ներքո իրականացվել է Աշխատանքի և կենսաթոշակների դեպարտամենտի և Առևտրի և Արդյունաբերության դեպարտամենտի ծախսերի վերլուծություն, որի հիմնական առարկան Նոր գործարքներ ծրագիրն է ու փոքր բիզնեսի սպասարկումը: Այդ ծրագրի շնորհիվ բարելավվել են կառավարության պատկերացումներն ու իրազեկվածության մակարդակը ծախսերի գենդերային վերլուծության հարցում: Ծրագրի արդյունքները արտացոլվել են 2004 թ. Ծախսային տեղեկատույում: ԿԽԲ-ի ընթացիկ աշխատանքի կարևոր ուղղություններից մեկը կայանում է գենդերային իրավահավասարության գծով պետական ոլորտի պատասխանատվության լուսաբանումը և իրավական լծակների միջոցով գենդերային բյուջեի վերլուծության քարոզումը:

Եվրոպական գենդերային բյուջեի ցանցը

Եվրոպական գենդերային բյուջեի ցանցը ստեղծվել է 2006 թ. փետրվարին, Գենդերային բյուջետավորման հարցերով զբաղվող հասա-

ռական կազմակերպության՝ Գենդեր և պետական ֆինանսներ Դիտորդների խմբի կողմից, Վիեննայում կազմակերպված սեմինարի ժամանակ: Սեմինարի նպատակն էր կառավարության շրջանակից դուրս գործող հասարակական գործիչների և հետազոտողների համախմբումը ցանցի հզորացման և փորձի փոխանակման համար և, օգտվելով Ավստրիայի նախագահությունից ԵՄ-ում, Գենդերային բյուջետավորման ինտեգրացման խթանումը ԵՄ-ի շրջանակում:

Մասնակիցները ներկայացրեցին գենդերային բյուջետավորման գծով իրենց կողմից տարվող աշխատանքը, կանգ առնելով հատուկ մոտեցումների, եզրակացությունների և քաղված դասերի վրա: Երկրում իրավիճակը դիտարկելուց հետո, քննարկում ծավալվեց Երվորպայի ամբողջ տարածքում Գենդերային բյուջետավորման ռազմավարության արմատավորման ուղիների, Գենդերային բյուջետավման որպես ճողովրդավարության և մասնակցության գրավականի և այն բյուջետային քաղաքականության անբաժանելի մասը դարձնելու հնարավորությունների շուրջ:

Այս հիմնադիր հանդիպման կարևոր արդյունքն էր հռչակագրի ընդունումը և Եվրոպական պետությունների ղեկավարներին ու կառավարություններին (ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովին) հղած դիմումը: Այն հնչեցվեց սեմինարին զուգահեռ կազմակերպված բարձրաստիճան պաշտոնյաների համաժողովի ընթացքում:

ԵԳԲՑ-ն ձգտում է ահազանգել գենդերային անհավասարությունների և դրանց վերացման գծով Եվրոպական երկրների կառավարությունների կողմից ստանձնած պարտավորությունների մասին, կոչելով ուշադրություն դարձնել այդ նպատակների նվաճման համար բյուջետային գործընթացում գենդերային դյուրազգաց մոտեցումների կիրառման հնարավորություններին: Իր անդամների շնորհիվ ԵԳԲՑ-ն հանդիսանում է այդ ոլորտում գիտելիքի և փորձի եզակի գանձատուն: Քաջ գիտակցելով գենդերային բյուջետավորման թափանցիկ և արդյունավետ իրականացման առավելությունը, ԵԳԲՑ-ն հանդես է գալիս պետական կառույցների և քաղաքացական հասարակության արդյունավետ երկխոսության կոչով:

Եվրոպական հանձնաժողովին հղված նամակ դիմումում ԵԳԲԾ-ն շեշտում է, որպեսզի գենդերային բյուջետավորումը դիտվի որպես Գենդերային ինստիտուտի գործունեության և նրա կողմից իրականացվող Գենդերային գործողությունների ծրագրի գերակա ուղղություն: Այն առաջարկում է որ հանձնաժողովը մշակի,

ֆինանսավորի և կոորդինացնի ուսումնասիրությունները, լավագույն միջազգային փորձի տարածման և յուրացման միջոցներն ու մեխանիզմները: Անդամ երկրներին կոչ է արվում արմատավորել գենդերային մոտեցումները բոլոր գործընթացներում, այդ թվում՝ Լիսաբոնի օրակարգում և հիմնվելով Միասնական ուղեցույցի վրա կիրառել կոորդինացման հրապարակային մոտեցում գենդերային բյուջետավորումը խթանելու նպատակով: Ազգային մակարդակով ԵԳԲԾ-ն կառավարություններին կոչ է անում տեղեկություններ հրապարակել իրենց երկրների բյուջեներում գենդերային հարցերի արտացոլման վերաբերյալ և չափօրինակի բերել գենդերային բյուջետավորման գործիքները:

ԵԳԲԾ-ն հանրային խորհրդատվական գործընթացի միջոցով ներկայացրել է ԵՄ-ի բյուջեի գծով վերջին դիտարկումը, որում այն էլ ավելի է զարգացրել և խորացրել Հռչակագրի դրույթները:

Քարոզարշավի հիմնաքարն է հանդիսանում Հանձնաժողովին և ազգային կառավարություններին հղված դիմումը, որում կոչ է արվում սատարել քաղաքացիական հասարակությանը գենդերային բյուջետավորման աշխատանքում: ԵԳԲԾ-ն վստահ է, որ քաղաքացիական հասարակության մասնակ-

ցությունը կենսական կարևորություն ունի և որ կանանց ձայնը և դերը պետք է գտնի կառավարությունների ամբողջական նյութական և հոգևոր աջակցությունը:

ԲԱԺԻՆ 5.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

i) ԲԱՌԱՐԱՍ[4]

Շահառուների գնահատում – թիրախային խմբերի կարիքներին և նախապատվություններին ծրագրերի և ծառայությունների համապատասխանելու վերաբերյալ կարծիքների հավաքագրում և վերլուծություն: Տեղեկատվությունը կարող է հավաքագրվել տարբեր ճանապարհներով, օրինակ հարցումների, ուսումնասիրությունների կամ հարցազրույցների միջոցով:

Բյուջե - Կոնկրետ ժամանակահատվածում կամ կոնկրետ գործունեության գծով դրամի ձեռք բերման և ծախսման ծրագիր:

Բյուջետային գործընթաց – բյուջետային ծրագրի փուլեր, որոնք որպես կանոն հետևյալն են.

[4] Van Beveren, Thera van Osch and Sheila Quinn, 2004, Budgeting for local gender budget initiatives.Vrouwen Alliantie, Utrecht: Հրապարակվել է հեղինակների համաձայնությամբ:

Փուլ 1. բյուջեի ձևակերպում
Փուլ 2. բյուջեի հաստատում
Փուլ 3. բյուջեի կատարում
Փուլ 4. բյուջեի գնահատում:

Բյուջեպավորում - Եկամուտների և ծախսերի ծրագրավորում և առաջնահերթությունների սահմանում որևէ ժամանակաշրջանի համար:

Քաղաքացիական հասարակություն – ոչ-կառավարական և եկամուտ չհետապնդող կազմակերպություններում օրինակ՝ արհմիություններում, կանանց կազմակերպություններում, էկոլոգիական, կրոնական կազմակերպություններում, սպորտային ակումբներում, ծնողական խմբերում, քարոզչական միություններում, երիտասարդական շարժումներում, զարգացման գծով համագործության կազմակերպություններում, ակտիվիստների խմբերում, սպառողների միություններում և այլ նման կառույցներում կամավորության սկզբունքով անդամակցող քաղաքացիներ: Միասին այդ միավորումները ճանաչվում են որպես հասարակության հանրային կապիտալ:

Հարկաբյուջետային քաղաքականություն – կառավարության քաղաքականություն, որում հարկը օգտագործվում է մի շարք ռազմավարական նպատակների համար, այդ թվում՝ եկամտի վերաբաշխման, տնտեսական աճի,

իրավահավասարության կամ կայուն զարգացման համար:

Գենդեր – կանանց և տղամարդկանց միջև սոցիալական տարբերություն: Գենդերը կանխորոշում է կանանց և տղամարդկանց միջև սոցիալական, մշակութային, քաղաքական և տնտեսական հարաբերությունները: Գենդերային հարաբերությունները տարբերվում են ըստ երկրների և փոփոխվում են ժամանակի ընթացքում, արձագանքելով պայմանների փոփոխությանը: Ի տարբերություն դրան սեռը արտահայտում է կանանց և տղամարդկանց միջև կենսաբանական տարբերությունը, որն անփոփոխ է:

Գենդերային աուդիտ – քաղաքականությունում, ծրագրերում, կազմակերպչական կառույցներում և գործընթացներում (այդ թվում՝ որոշումների կայացման գործընթացներում) և համապատասխան բյուջեներում գենդերային իրավահավասարության արդյունավետ արտացոլվածության աստիճանը:

Գենդերային բյուջեի վերլուծություն – տղամարդկանց, կանանց, տղաների և աղջիկների սոցիալական դիրքի և նրանց միջև սոցիալական հարաբերությունների վրա (կառավարության) եկամուտների և ծախսերի ազդեցությունը: Գենդերային բյուջեի վերլուծությունը օգնում է որոշել, թե ինչպես պետք է

ճշգրտվի քաղաքականությունը առավելագույն ազդեցություն ունենալու համար և ինչպես պետք է վերաբաշխվեն միջոցները մարդկային զարգացման և գենդերային իրավահավասարության ապահովման համար:

Գենդերային բյուջետավորում – Գենդերային հեռանկարի կիրառումը ֆինանսական ծրագրերում և բյուջետային գործընթացներում, հաշվի առնելով կանանց և տղամարդկանց (տարբեր խմբերի) կարիքները և առաջնահերթությունները, ելնելով նրանց տարբեր դերակատարումից տանը, աշխատանքային վայրում և հասարակության ներքո:
Եվրոպայի խորհրդի համար գենդերային բյուջետավորումը դա «գենդերային ռազմավարության արմատավորումն է բյուջետային գործընթացներում: Այն նշանակում է գենդերային հիքերով բյուջեների գնահատում, արմատավորելով գենդերային հեռանկարը բյուջետային գործընթացի բոլոր փուլերում և վերակառուցելով եկամուտներն ու ծախսերը գենդերային իրավահավասարության հասնելու ուղղությամբ»:

Գենդերային բյուջեի գծով նախաձեռնություններ (միջոցառումներ կամ ծրագրեր) – նախաձեռնություններ, որոնք միտված են դեպի բյուջեի զննմանը և վերլուծությանը, որի նպատակն է ստանալ բյուջեի հետևանքների պատկերը կանանց և տղամարդկանց (տար-

բեր խմբերի) համար և մշակել գենդերային իրավահավասարության ռազմավարությունը:

Վիճակագրական տվյալների գենդերային ապահովորացում – Տվյալների առանձնացում ըստ կանանց/աղջիկների և տղամարդկանց/տղաների: Սոցիալ-տնտեսական վիճակագրական տվյալների բացվածք, որը թույլ է տալիս ներկայացնել կանանց/աղջիկների և տղամարդկանց/տղաների (տարբեր խմբերի) միջև տարբերությունը և նմանությունը: Այդ տվյալները առանցքային դեր ունեն գենդերային բյուջետավորման համար, քանի որ առանց դրանց անհնար է գնահատել բյուջեի ազդեցությունը գենդերային հարաբերությունների վրա:

Գենդերային իրավահավասարություն – իրավիճակ, երբ կանայք և տղամարդիկ օգտվում են հավասար իրավունքներից և հնարավորություններից, որի արդյունքում կանանց և տղամարդկանց վարքը, ձգտումները, ցանկությունները և կարիքները հավասար գնահատականի և ուշադրության են արժանանում: Եվրոպայի խորհրդի համար գենդերային իրավահավասարությունը դա «երկու սեռերի համար պետական և մասնավոր կյանքի բոլոր ոլորտների հավասար տեսանելիությունն է, լիազորվածությունը, պատասխանատվությունը և մասնակցությունը: Գենդերային իրավահավասարությունը դա գենդերային անհավասա-

րության, այլ ոչ թե գենդերային տարբերության հակառակ կողմն է»:

Գենդերային ռազմավարության արմատավորում – Յուրաքանչյուր մակարդակի և ոլորտի ցանկացած ծրագրավորված գործողության, այդ թվում՝ օրենսդրության, ռազմավարությունների և ծրագրերի գնահատումը կանանց և տղամարկանց վրա ազդեցության տեսակետից: Գենդերային ռազմավարության արմատավորումը թույլ է տալիս ամփոփել կանանց, ինչպես նաև տղամարդկանց հուզող խնդիրները և փորձը, որպես քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառների մշակման, իրականացման մոնիտորինգի և գնահատման անբաժանելի մաս: Դա արվում է այնպիսի ճանապարհով, որպեսզի կանայք և տղամարդիկ օգտվեն իրավահավասարությունից և չենթարկվեն խտրականության: Գենդերային ռազմավարության արմատավորման վերջնական նպատակն է գենդերային իրավահավասարության ձեռք բերումը (Միավորյալ Ազգերի Տնտեսական և սոցիալական խորհրդի սահմանում՝ ECOSOC, հուլիս 1997 թ.):

Եվրոպայի խորհրդի համար գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումն է *«Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը դա ռազմավարական գործընթացների (վերա)կազմակերպում, բարելավում,*

զարգացում և գնահատում է, որը միտված է ռազմավարության մասին որոշումներ կայացնող գործիչների կողմից սեռերի իրավահավասարության տեսլականի ամրագրմանը բոլոր ռազմավարություններում, մակարդակներում և փուլերում»:

Գենդերային հեռանկար – տեսլական, որը թույլ է տալիս հասկանալ և հատուկ ձևով վերլուծել կանանց և տղամարդկանց բնութագրող առանձնահատկությունները, տարբերությունները և նմանությունները: Միջազգային աշխատանքի կազմակերպության համաձայն գենդերային հեռանկարը *«տղամարդկանց և կանանց իրավասությունների և ընդհանուր սոցիալական հարաբերությունների դիտարկման միջոցով հարաբերությունների իրական մակարդակը պարզելու գործիք է: Այն գաղափարական շրջանակ է, մեկնաբանության մեթոդաբանություն է և քննադատական վերլուծության գործիք է, որը կանխորոշում է որոշումները, տարածում և փոփոխում տեսակետները և թույլ է տալիս վերակառուցել գաղափարները, ուսումնասիրել վերաբերմունքն ու բացահայտել գենդերային խտրականության դեպքերն ու պայմանները՝ երկխոսության շնորհիվ փոփոխելու և շտկելու համար»* (Cinterfor, 1996 թ.):

Գենդերային հարաբերություններ – Սոցիալական և մշակութային մակարդակով իրակա-

նացվող հարաբերությունները կանանց և տղամարդկանց միջև:

Կառավարության բյուջեներ – կառավարության ծախսերի և եկամուտների ֆինանսական ծրագրեր, որոնք հիմնված են օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի վրա և ենթակա են ժողովրդավարական ճանապարհով ընտրված ներկայացուցիչների (այսինքն՝ խորհրդարանի անդամների) հաստատմանը: Կառավարության բյուջեները հետապնդում են որոշակի ընդհանուր քաղաքական նպատակներ՝ տնտեսական աճ, կայուն գներ, գործազրկության կրճատում, եկամուտների արդար բաշխում, սոցիալական ապահովություն, պարտադիր կրթություն, առողջապահական ծառայությունների հասանելիություն, մարդու իրավունքներ, ազատագրում (էմանսիպացիա), բնական պաշարների անվտանգ օգտագործում, բնակարանային ապահովում և այլն:

Կառավարության քաղաքական դիրքորոշումը կանխորոշում է վերջինիս գերակայությունները իշխանության ժամանակաշրջանում: Այդ գերակայություններն ամրագրվում են տարեկան բյուջեների մասին օրենքներում: Տարեկան բյուջեի մասին օրենքը կառավարության կարևորագույն փաստաթուղթն է: Այն սահմանում է, թե ինչպես են առաջանում և ծախսվում եկամուտները:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) – կոնկրետ ժամանակաշրջանում երկրի կողմից արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների համախառն շուկայական արժեքը դրամական արտահայտությամբ, հանած արտադրության ընթացքում մինչև մաշվածությունն օգտագործված ապրանքների և ծառայությունների արժեքը:

Միջոլորտային գենդերային մոտեցում – սոցիալական հետազոտման մեթոդ, ըստ որի գենդերը, ազգությունը, դասը, սեռը և այլ սոցիալական տարբերությունները միաժամանակ ենթարկվում են վերլուծության:

Հասարակական կազմակերպություն – ոչկառավարական կազմակերպություն, որը գործում է ոչ եկամուտ ստանալու նպատակով:

Պետական եկամուտներ - կառավարության եկամուտ, որը հիմնականում բաղկացած է ուղղակի և անուղղակի հարկերից և պարտադիր սոցիալական վճարներից:

ii) Աղբյուրներ

Գրքեր

A Guide to Budget Work for NGOs, The International Budget Project, Washington, DC www.internationalbudget.org

Budlender, Debbie, Diane Elson, Guy Hewitt, and Tanni Mukhopadhyay, *eds, 2002, Gender Budgets Make Cents: Understanding Gender-Responsive Budgets (London: Commonwealth Secretariat).*

Budlender, Debbie, and Guy Hewitt, *eds, 2002, Gender Budgets Make More Cents: Country Studies and Good Practice (London: Commonwealth Secretariat).*

Budlender, Debbie, and Rhonda Sharp, with Kerri Allen, 1998, *How to do a Gender-Sensitive Budget Analysis: Contemporary Research and Analysis* (Commonwealth Secretariat and the Australian Agency for International Development).

Debbie Budlender & Rhonda Sharp with Kerri Allen, 1998, *How to do a gender- sensitive budget analysis: Contemporary research and practice* The Commonwealth Secretariat.

Isabella Bakker, 2002, Fiscal Policy, *Accountability and Voice: The Example of Gender Responsive Budget Initiatives*, UNDP Human Development Report

Էլեկտրոնային կայքեր

BRIDGE-ը խթանում է գենդերային քաղաքականությունը և որոշումներ կայացնողների և իրականացնողների կողմից գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորմանն ուղղված քայլերը, լրացնելով տեսության, քաղաքականության և պրակտիկայի միջև առկա ճեղքվածքները մատչելի և զանազան գենդերային տեղեկատվությամբ: BRIDGE-ը ստեղծվել է 1992 թ. Միավորյալ թագավորության Զարգացման հարցերով ուսումնասիրությունների ինստիտուտի (IDS) կազմում, որպես գենդերային հարցերով մասնագիտացված գիտահետազոտական և տեղեկատվական ծառայություն:

BRIDGE-ի Ակտուալ խորագրերը ամփոփ և մատչելի տեսքով ներկայացնում են գենդերային խնդիրների վերաբերյալ վերջին զարգացումները և լավագույն տեղեկատվական աղբյուրների հասցեներն ու նկարագրությունը: Յուրաքանչյուր հրապարակում պարունակում է Ամփոփիչ դիտարկում և Օգտակար աղբյուրների ցանկ:
http://www.bridge.ids.ac.uk/reports_gend_CEP.html#Budgets

Գենդերային դյուրազգաց բյուջետավորում էլեկտրոնային կայքը ստեղծվել է 2001 թվականին ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի, Բրիտանական Համագործակցության Երկրների Քարտուղարության և Կանադայի Միջազգային զարգացման հետազոտական կողմից: Այն ձգտում է օժանդակել կառավարություններին, կանանց կազմակերպություններին, խորհրդարանականներին և գիտնականներին բյուջետային ծրագրավորումը գենդերային իրավահավասարության նպատակներին համապատասխանեցնելու հարցում: Կայքում նաև տեղադրված են զանազան տեղեկատվական, վերլուծողական և ուսուցողական նյութեր գենդերային բյուջետավորման վերաբերյալ: Այն նաև տեղեկատվություն է տրամադրում այդ հարցի շուրջ տարբեր երկրների փորձի վերաբերյալ և նպաստում երկրների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների միջև ցանցաստեղծմանը և համագործակցությանը:
http://www.gender-budgets.org/

Միջազգային բյուջետային գործընկերությունը (IBP) ստեղծվել է Բյուջետային և քաղաքական գերակայությունների կենտրոնի կազմում պետական բյուջեների գործընթացների, կառույցների և արդյունքների վերլուծության, մոնիտորինգի և ազդեցության հարցերում զարգացող երկրների հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու նպատակով:

Այդ էլեկտրոնային կայքը հանդիսանում է հաշվետվությունների, նյութերի և ցանցերի շտեմարան, որը օգտակար տեղեկատվություն է պարունակում ամբողջ աշխարհում բյուջետային համակարգերի թափանցիկության և մարդասիրական ուղղվածության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին:

http://www.internationalbudget.org

ԲԱԺԻՆ 6.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Buddlender, Debbie, and Rhonda Sharp, with Kerri Allen. 1998. *How to do a Gender-Sensitive Budget Analysis: Contemporary Research and Practice.* London and Canberra: Commonwealth Secretariat and AusAid.

Elson, Diane (2002): *Gender Responsive Budget Initiatives: Some Key Dimensions and Practical Example*. In: Gender Budgeting Initiatives. Strategies, Concepts and Experiences, Papers from a High Level International Conference “Strengthening Economic and Financial Governance through Gender Responsive Budgeting”, 16.-18. October 2001, Brussels.

Feiler, Klaus (2008). *A future-oriented steering mechanism: Gender Budgeting in Berlin.* Power Point Presentation given at the 52nd Session of the United Nations Commission on the Status of Women Meeting on “Financing for gender equality and the empowerment of women” 25 February – 7 March, 2008. New York.

Gender mainstreaming. Conceptual framework, methodology and presentation of good practices. Final report of activities of the Group of Specialists on Mainstreaming (EG-S-MS). Directorate general of human rights, Council of Europe, 1998.

Gubitzer, Luise, Klatzer, Elisabeth and Michaela Neumayer (2008), *Gender Gender Budgeting - Anleitung und Beispiele zur Umsetzung in Ффentlichen Institutionen,* Vienna [Gender Budgeting Handbook for public officials].

Holvoet, Nathalie (2006) *Gender Budgeting: Its Usefulness in Programme-Based Approaches to Aid.* EC Gender Helpdesk.

Junta de Andalucia. Consejerцa de Economцa y Hacienda. Elaboracign: Comisign de Impacto de Gnnero en los Presupuestos (2007): *Gender Impact Evaluation Report from the Draft Budget for the Autonomous Region of Andalusia for 2008.*

Klatzer, Elisabeth. Watch Group. Gender and Public Finance *(2008): The integration of Gender Budgeting in Performance-Based Budgeting.* Paper presented at the conference Public Budgeting Responsible To Gender Equality. Presupuestacign POblica Responsable con la Igualdad de Gnnero. June 9-10, 2008, Bilbao.

Klatzer, Elisabeth and Michaela Neumayr (eds.) Watch Group. Gender and Public Finance (2006): Gender Budgeting in Europe. Conference Documentation from Meeting of European Gender Budgeting Initiatives, 5-7 February, 2006.

Madoerin, Mascha (2007): *Gender-responsive budgeting initiatives in Switzerland:* Work in progress. Editor: Federal Office for Gender Equality, Switzerland. Translation: Thor Erik Maeder, Laos.

Me, Angela (2008) *What are the new challenges for Gender Statistics?* In Gender Gap and Economic Policies: Challenges and good practices ed. Ewa Ruminska-Zimny, Geneva and New York, 2009 (forthcoming).

Outla, Veronika et al (2007), *Gender Budgeting in Practice.* Report from a Transnational GenderAlp Project involving Austria, Bulgaria, Czech Republic, Hungary and Italy.

Report on Gender budgeting. Final report of the Group of Specialists on gender budgeting (EG-S-GB). Directorate General of human rights and legal affairs, Strasbourg, 2005.

Sharp, Rhonda (2003): *Budgeting for equity. Gender budget initiatives within a framework of performance oriented budgeting.* New York: United Nations Development Fund for Women.

Swedish Government Official Reports, (2007:15). *Gender Mainstreaming Manual*. A book of practical methods from the Swedish Gender Mainstreaming Support Committee (JämStöd).

Swedish Government Official Reports, (2007:15). *Gender Equality in Public Services. Some Useful advice on gender mainstreaming.* A book of ideas for managers and strategies from the Swedish Gender Mainstreaming Support Committee (JämStöd).

Swedish Government Offices (2006). *Moving Ahead: Gender Budgeting in Sweden*

Van Beveren, Jacintha, Thera van Osch and Sheila Quinn, 2004, *Budgeting for All: Manual for local gender budget initiatives,* Vrouwen Alliantie, Uthrecht.

von Felton, Mirjam (2008) in *Gender-responsive budget analysis in the Canton of Basel-Stadt*, Switzerland.Editors: Office for Gender Equality of the Canton of Basel-Stadt, Statistical Office of the Canton of Basel-Stadt, Women's Council of the Canton of Basel-Stadt.

Weinmann, Ute (2007), *Implementation of Gender Budgeting in the Federal State of Berlin.* Paper given at the II Andalusian Conference on Economy and Budgeting with a Gender Perspective.12 & 13 December, 2007, Malaga.

ԲԱԺԻՆ 7.

ԵՐԱՇԽԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հեղինակը ցանկանում է իր երաշխագիտությունը հայտնել ԵԽ-ի երկրների բոլոր այն ներկայացուցիչներին, որոնք նյութեր են տրամադրել այս աշխատանքի համար և Կանանց ու տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի անդամներին այն կազմելիս լուրջ փորձագիտական օժանդակություն տրամադրելու համար: Հատուկ շնորհակալություն՝ հայտնվում գենդերային բյուջետավորման Եվրոպական ցանցի անդամներին, մասնավորապես Դիանա Էլսոնին, Էլիզաբեթ Կլաթցերին, Ռեջինա Ֆրեյին, Ալիսա Մակքեյին, Իոլանտա Ջուբետոին, Պրիյա Ալվարեսին, Անժելա Օ'Հագանին, Աննալիսա Ռոսելիին և Տիերա վան Օշին՝ իրենց երկրներում իրականացվող գենդերային ծրագրերի և այլ տեղեկատվություն տրամադրելու համար: Հատուկ շնորհակալություն է հայտնվում ԵԽ-ի քարտուղարության աշխատակիցներ Աննա Մարի Ֆառաջին և Պոլա Հինչին մեծ օժանդակության և համբերատար վերաբերմունքի համար: